Հ ա վ ե լ վ ա ծ N 1

ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 16-ի N 1693 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
(2010-2020ԹԹ)

ԵՐԵՎԱՆ, 2010 Թ.

10_1693

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

BIPM/ԿՉՄԲ	Կշիռների և չափերի միջազգային բյուրո
CEN/ՍԵՆ	Ստանդարտացման Եվրոպական կոմիտե
CENELEC/ ՍԵՆԷԼԵԿ	Էլեկտրատեխնիկական ստանդարտացման եվրոպական կոմիտե
CIPM/ԿՉՄԿ	Կշիռների և չափերի միջազգային կոմիտե
CJSC/ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
DCFTA/ԽՀԱԱՀ	Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր
EA/ՀԵՀ	Հավատարմագրման Եվրոպական Համագործակցություն
EC/ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ENP/ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ETSI/ՀԵՍԻ	Հեռահաղորդակցության եվրոպական ստանդարտների ինստիտուտ
EU/ԵՄ	Եվրոպական Միություն
IAF/ՀՄՖ	Հավատարմագրման միջազգային ֆորում
IEC/ԻԷԿ	Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողով
ILAC/ԼՀՄՀ	Լաբորատորիաների հավատարմագրման միջազգային համագործակցություն
ISO/ԻՍՕ	Ստանդարտացման միջազգային կազմակերպություն
JCGM/ՉՈՒՀԿ	Չափագիտության ուղեցույցների համատեղ կոմիտե
JSC/ԲԸ	Բաժնետիրական ընկերություն
OIML/ՕՉՄԿ	Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպություն
SNCO/ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
QI/ՈԵ	Որակի ենթակառուցվածք
TBT/ԱՏԽ	Առևտրի տեխնիկական խոչընդոտներ
WTO/ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԷԲՊՆ	Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲՊՆ	Բնապահպանության նախարարություն
ՏԿՆ	Տրանսպորտի և կապի նախարարություն
ՔՆ	Քաղաքաշինության նախարարություն
NPAA	ԵՄ համընդհանուր օրենսդրությանը ազգային օրենսդրության մոտարկման ազգային ծրագիր
ՇՍՇՊ ՊՏ	Շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչություն
ՍԲՍ ԱԽ	Սանիտարական և բուսասանիտարական հարցերով աշխատանքային խումբ
ԱՏԽ ԱԽ	Առևտրի տեխնիկական խոչընդոտների հարցերով աշխատանքային խումբ

ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Արտադրանք	Գործընթացի արդյունք (ԻՍՕ /ԻԷԿ 17000:2004): ԻՍՕ 9000:2000-ում նշված են արտադրանքի չորս ընդհանուր տեսակներ. ծառայություններ, ծրագրակազմ, սարքակազմ և վերամշակված նյութեր:
Համապատասխանու-թյան գնահատում	Արտադրանքին, գործընթացին, համակարգին, անձին կամ մարմնին ներկայացվող սահմանված պահանջների կատարման ապացույց (ԻՍՕ /ԻԷԿ 17000:2004): Սա ներառում է փորձարկում, փորձաքննություն և սերտիֆիկացում, ինչպես նաև՝ համապատասխանության մարմինների հավատարմագրում:
Հավատարմագրում	Երրորդ կողմի միջոցով համապատասխանության հավաստում, որը վերաբերում է համապատասխանության գնահատման մարմնին և պաշտոնապես ապացուցում է համապատասխանության գնահատման որոշակի խնդիրներ լուծելու նրա իրավասությունը (ԻՍՕ /ԻԷԿ 17011:2004):
Շուկայի վերահսկողություն	Պետական մարմինների կողմից իրականացվող գործունեություն և ձեռնարկվող միջոցառումներ՝ ապահովելու արտադրանքի՝ համապատասխան օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխանության և առողջությանը, անվտանգությանը կամ հանրային շահերի պաշտպանության որևէ գործոնին վտանգի կանխման նպատակով:
Չափագիտություն	Գիտություն չափումների և դրանց կիրառության մասին (ՉՈՒՀԿ 200:2008 – Չափագիտության միջազգային բառարան):
Սերտիֆիկացում	Երրորդ կողմի միջոցով արտադրանքի, գործընթացի, համակարգի կամ անձի համապատասխանության հավաստում (ԻՍՕ /ԻԷԿ 17000:2004):
Ստանդարտացում	Իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ այն համընդհանուր և բազմակի կիրառման դրույթների սահմանման գործողությունը, որոնք նպատակաուղղված են որոշակի բնագավառում կարգավորման լավագույն աստիճանի հասնելուն: Մասնավորապես, այս գործունեությունը բաղկացած է ստանդարտների ձևակերպման, տրամադրման և իրականացման գործընթացներին: (ԻՍՕ /ԻԷԿ Ուղեցույց 2:2004):
Ստուգաճշտում/ (կալիբրավորում)	Գործողություն, որը որոշակի առաջադրված պայմաններում՝ որպես առաջին քայլ կապ է ստեղծում չափումների ստանդարտներով տրված չափումների անճշտություններով մեծությունների արժեքների և զուգակցված չափումների անճշտություններով համապատասխան ցուցմունքների միջև, իսկ որպես երկրորդ քայլ՝ օգտագործում է այս տեղեկատվությունը ցուցմունքից չափման արդյունքը ստանալու նպատակով (ՉՈՒՀԿ 200:2008 – Չափագիտության միջազգային բառարան):
Տեխնիկական կանոնակարգ	Փաստաթուղթ, որով սահմանվում են արտադրանքի բնութագրերը կամ դրանց առնչվող գործընթացներն ու արտադրության մեթոդները, ներառյալ՝ կատարման համար պարտադիր գործող վարչական դրույթները: Այն կարող է ընդգրկել նաև տերմինաբանության, նշանագրերի, փաթեթավորման, մակնշման կամ պիտակավորման պահանջներ կամ բացառապես առնչվել դրանց, երբ դրանք կիրառվում են արտադրանքի, գործընթացի կամ արտադրության մեթոդի նկատմամբ (ԱՀԿ ԱՏԽ մասին համաձայնագիր):

ԵՄ տեխնիկական կանոնակարգերն ընդգրկում են.

(ա) անդամ պետությունների օրենքները, կանոնակարգերը կամ վարչական դրույթները, որոնք վերաբերում են կամ տեխնիկական մասնագրերին կամ այլ պահանջներին, կամ ծառայությունների վերաբերյալ կանոններին, կամ մասնագիտական կանոններին կամ գործելակերպի կանոններին, որոնք էլ իրենց հերթին վերաբերում են տեխնիկական մասնագրերին կամ այլ պահանջների կամ ծառայությունների վերաբերյալ կանոններին, որոնց կատարումը համապատասխանություն է ենթադրում վերը նշված օրենքներով, կանոնակարգերով կամ վարչական դրույթներով իրականացվող պարտավորություններին,

(բ) կամավոր համաձայնագրեր, որոնց պայմանագրային կողմ է հանդիսանում որևէ պետական մարմին և, որոնք, բխելով ընդհանուր շահերից, նախատեսում են տեխնիկական մասնագրերի կամ այլ պահանջների, կամ ծառայությունների վերաբերյալ կանոնների կատարում, բացառությամբ պետական գնումների մրցույթների մասնագրերի, և

) տեխնիկական մասնագրեր կամ այլ պահանջներ կամ ծառայությունների վերաբերյալ կանոններ, որոնք կապված են արտադրանքի կամ ծառայությունների սպառման վրա ազդող ֆիսկալ կամ ֆինանսական միջոցառումների հետ՝ խրախուսելով համապատասխանությունը այդ տեխնիկական մասնագրերին կամ այլ պահանջներին, կամ ծառայությունների վերաբերյալ կանոններին. ազգային սոցիալական անվտանգության համակարգերի հետ կապված տեխնիկական մասնագրերը կամ այլ պահանջները կամ ծառայությունների վերաբերյալ կանոններն ընդգրկված չեն (ԵՀ 98/34/ դիրեկտիվը սահմանում է տեխնիկական ստանդարտների ու կանոնակարգերի ոլորտում տեղեկատվության ապահովման ընթացակարգը)։

Փորձարկում	Ընթացակարգի համաձայն համապատասխանության գնահատման օբյեկտի մեկ կամ մի քանի բնութագրերի սահմանում (ԻՍՕ /ԻԷԿ 17000:2004)։
Տեխնիկական հսկողության	Արտադրանքի նախագծման և պատրաստման գործընթացի քննություն հատուկ պահանջներին համապատասխանության որոշման նպատակով կամ մասնագիտական դատողության հիման վրա՝ ընդհանուր պահանջներին համապատասխանության որոշման նպատակով (ԻՍՕ /ԻԷԿ 17000:2004)։
Չափման միջոցի ստուգաչափում	Ընթացակարգ (տեսակի հաստատումից տարբեր), որը ներառում է զննում կամ դրոշմում և/կամ ստուգաչափման սերտիֆիկատի շնորհում, որը վկայում և հաստատում է, որ չափման միջոցը համապատասխանում է սահմանված պահանջներին։

1. Ներածություն

Ժամանակակից պետություններն իրականացնում են արտադրանքների անվտանգության վերահսկողության և որակի ապահովման քաղաքականություն: Պետությունները մշակում են տեխնիկական կանոնակարգեր և վերահսկում են շուկան, ինչպես նաև պայմաններ են ստեղծում պետական, պետական մասնակցությամբ ու մասնավոր կազմակերպությունների՝ որակի ենթակառուցվածք կոչվող բարդ համակարգի զարգացման համար: Այս համակարգը բաղկացած է ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության և սերտիֆիկացման ոլորտներից և սերտորեն փոխկապակցված է տեխնիկական կանոնակարգերի ու շուկայի վերահսկողության հետ: Որակի ենթակառուցվածքը՝ իր ծառայությունների մատուցման շրջանակում, ապահովում է համապատասխանություն պարտադիր պահանջներին, այդպիսով պաշտպանելով սպառողների և տնտեսվարող սուբյեկտների շահերը և ապահովելով արտադրանքի ու ծառայությունների որակը և համապատասխանությունը: Այդ ամենը միասին խթանում են արտահանումը, մրցակցությունը և նորարարությունը:

Սույն ռազմավարությունը մշակվել է նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժամանակակից որակի ենթակառուցվածքի էությունը Հայաստանում դեռևս լիովին բացահայտված չէ, այլապես, տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության, սերտիֆիկացման և շուկայի վերահսկողության ներկայիս համակարգը կկարողանար ավելի լավ ծառայել երկրի քաղաքացիներին և բիզնեսին: Ռազմավարության մեջ հաշվի են առնված գործարար միջավայրի և սպառողների ընկերակցությունների խնդիրներն ու մտահոգությունները, և Հայաստանի տնտեսության ներկայիս կարիքներն ու առաջնահերթությունները: Այստեղ դիտարկվել են որակի ենթակառուցվածքին վերաբերող միջազգային ու եվրոպական պահանջները և զարգացվում է այն տեսակետը, որ Հայաստանի համակարգը պետք է կիրառի լավագույն փորձը, բավարարի ազգային կարիքները և ապահովի ողջ աշխարհում ընդունելի ծառայություններ ու սերտիֆիկատներ: Պակաս կարևոր չէ նաև այն, որ միջազգային և եվրոպական պրակտիկայում պարենային և ոչ պարենային արտադրանքների նկատմամբ կիրառվող կարգավորող մոտեցումները տարբեր են, և նույն տարբերակումը պետք է գործի նաև հայաստանյան տեխնիկական կանոնակարգերի դեպքում:

<u>Ռազմավարության նպատակն է ապահովել ազգային որակի ենթակառուցվածքի զարգացման հեռանկարային ուղղվածություն և գոյություն ունեցող համակարգը բարեփոխել այնպես, որ այն համապատասխանի միջազգային և եվրոպական պահանջներին:</u> Այս բարեփոխումը բաղկացած է տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության, սերտիֆիկացման և շուկայի վերահսկողության ոլորտներում իրավական, ինստիտուցիոնալ և կարողությունների հզորացմանը և իրազեկության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներից: Ինչ վերաբերում է տեխնիկական կանոնակարգերին, ապա շեշտադրվում է ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերը՝ ԵՄ ընդհանուր օրենսդրությանը համապատասխանեցնելու և բոլոր խմբերի արտադրանքների վրա տարածվող տեխնիկական կանոնակարգերից առևտրի տեխնիկական խոչընդոտները վերացնելու խնդիրը: Ռազմավարությունը, որն իրականացվելու է մինչև 2020թ., նախատեսում է աստիճանական համապատասխանեցում պահանջներին և Հայաստանի որակի ենթակառուցվածքի լիակատար ինտեգրում գլոբալ համակարգին: Ռազմավարությունը համալրվում է գործողությունների ծրագրով՝ 2010-2011թթ. մեկնարկային ժամկետի համար:

ՀՀ կառավարությունը գիտակցում է այս համակարգի արժեքը հանրության համար և կարևորում է ԵՄ-ի հետ ԽՀԱԱՀ-ի բանակցությունների շրջանակում որակի ենթակառուցվածքի դերը երկրի՝ արտահանմանն առնչվող ռազմավարական գերակայությունների իրականացման հարցում: ՀՀ Էկոնոմիկայի նախարարության միջոցով ՀՀ կառավարությունը ներգրավել է ազգային ինստիտուտներին, փորձագետներին ու շահագրգիռ կողմերին, ինչպես նաև՝ միջազգային հանրությանը՝ ռազմավարության կազմմանն ու քննարկմանը իրենց մասնակցությունը բերելու համար: Այս աշխատանքները մեկնարկեցին 2009թ.-ի ապրիլին, երբ նախատեսվեցին մի շարք վերլուծություններ և կարիքների ու բացերի գնահատումներ: Աշխատանքներն ամփոփվեցին 2010 թ.-ի մայիսին՝ ծավալուն հանրային քննարկմամբ: Պետական աջակցությունը կշարունակվի իրականացման փուլերի ընթացքում՝ բարձրաստիճան շահագրգիռ կողմերի հետ քննարկումների հարթակ ստեղծելու,

բարեփոխումների արդյունավետ վերահսկման մեխանիզմ մշակելու, նոր օրենսդրություն մշակելու և իրագործելու, նախարարություններին կից որակի ենթակառուցվածքի ինստիտուտները բարեփոխելու և ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բարեփոխված մարմինների աշխատանքներին օժանդակելու միջոցով: Կառավարությունն ակտիվ քայլեր կձեռնարկի՝ շահագրգիռ կողմերին ներգրավելու և հանրության իրազեկվացությունը անվտանգության վերահսկողության և որակի ապահովման հարցերի վերաբերյալ բարձրացնելու ուղղությամբ: Այդուհանդերձ, կառավարությունը ակնկալում է, որ մասնավոր հատվածը ևս կստանձնի իր բաժին պատասխանատվությունը՝ որակի ենթակառուցվածքի բարեփոխմանը, ինչպես նաև՝ որակի ենթակառուցվածքի հաստատությունների գործունեությանը և կառավարմանը մասնակցելով, ինչպես նաև որակի բարձրացման ուղղությամբ շարունակական ներդրումներ կատարելով:

2. Որակի ենթակառուցվածքի ներկայիս վիճակը Հայաստանում

2.1 Առկա իրավական դաշտը և ինստիտուցիոնալ կառուցվածքը

Հայաստանի Հանրապետությունը ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության և սերտիֆիկացման համակարգում իրականացրել է բարեփոխումներ՝ ազգային տնտեսության նոր իրողություններին համապատասխանելու և ԱՀԿ-ին անդամակցելու նպատակով: Հիմնական բարեփոխումն իրականացվել է 1999 թ.՝ մի շարք օրենքների ընդունմամբ: Այդ օրենքներն են՝ <<Ստանդարտացման մասին>> ՀՀ օրենքը, <<Չափումների միասնականության ապահովման մասին>> ՀՀ օրենքը և <<Համապատասխանության գնահատման մասին>> ՀՀ օրենքը: Այս բարեփոխումներով վերջ դրվեց փորձարկման և սերտիֆիկացման ծառայություններում պետության մենաշնորհին, և ներդրվեց ստանդարտների կամավոր օգտագործման հիմնարար սկզբունքը: Ինստիտուցիոնալ իմաստով իրենց նախանշված գործառույթները սկսեցին իրականացնել Ստանդարտացման ինստիտուտը, Չափագիտության ինստիտուտը և Հավատարմագրման գործակալությունը: Իր ժամանակի համար բարեփոխումն այնքան առաջադիմական էր, որ արդիականացման հարցում կառավարության վճռականությունը նկատվում էր ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ արտասահմանում:

Այդ ժամանակից ի վեր համակարգն, իհարկե, որոշակի զարգացում է ապրել և ներկայումս որակի ենթակառուցվածքը ներառում է հետևյալ հաստատությունները.

Հաստատություն	Ներկայիս հիմնական գործառույթները	Համապատասխան օրենսդրություն*
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Հանդիսանում է համապատասխանության գնահատման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմին, որը • մշակում է ստանդարտացման պետական քաղաքականություն, • ընդունում և գործողության մեջ է դնում ազգային ստանդարտները, • համակարգում է ստանդարտների ազգային ինստիտուտի աշխատանքը:	<<Ստանդարտացման մասին>> ՀՀ օրենք
	Հանդես է գալիս որպես չափագիտության ազգային մարմին, որը. • մշակում է պետական քաղաքականությունը չափագիտության բնագավառում, • համակարգում է չափագիտության ազգային ինստիտուտի աշխատանքը, • իրականացնում է պետական չափագիտական վերահսկողություն:	<<Չափումների միասնականության ապահովման մասին>> ՀՀ օրենք
	Հանդես է գալիս որպես համապատասխանության գնահատման ազգային մարմին, որը. • իրականացնում է պետական քաղաքականությունը համապատասխանության գնահատման բնագավառում, • իրականացնում է արտադրանքի կամ	<<Համապատասխանության գնահատման մասին>> ՀՀ օրենք

	ծառայության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն, • իրականացնում է հավատարմագրման գործընթացը:	
ՀՀ էկոնոմիկայի նախարարության Հավատարմագրման գործակալություն	• կազմակերպում է հավատարմագրման գործընթացը:	<<Համապատասխանության գնահատման մասին>> ՀՀ օրենք
Էկոնոմիկայի նախարարության Շուկայի և սպառողների իրավունքների պաշտպանության պետական տեսչություն	Իրականացնում է պետական տեսչական գործընթաց, մասնավորապես՝ • ոչ պարենային արտադրանքի, չափման միջոցների շուկայի վերահսկողություն, • չափման միջոցների չափագիտական վերահսկողություն, • հեղուկ վառելիքի որակի վերահսկողություն:	<<Ստանդարտացման մասին>> ՀՀ օրենք <<Չափումների միասնականության ապահովման մասին>> ՀՀ օրենք <<Համապատասխանության գնահատման մասին>> ՀՀ օրենք
<<Ստանդարտների ազգային ինստիտուտ>> ՓԲԸ (իրավաբանական անձ)	• ընդունում և հրատարակում է ազգային ստանդարտներ, • ստեղծում և վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը, • երկիրը ներկայացնում է միջազգային կազմակերպություններում, • իրականացնում է փորձարկում և սերտիֆիկացում:	<<Ստանդարտացման մասին>> ՀՀ օրենք
<<Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ>>	• ստեղծում, պահում և պահպանում է ազգային էտալոնները և տարածում է չափման միավորներ, • իրականացնում է չափման միջոցների ստուգաչափում և չափագիտական վկայագրում, • կազմակերպում է հավատարմագրման գործընթացը չափագիտության մեջ**	<<Չափումների միասնականության ապահովման մասին>> ՀՀ օրենք

**Փոփոխվել է 2004թ.*

*** Այս գործառույթը երբևէ չի իրականացվել:*

<<Ստանդարտացման մասին>> ՀՀ օրենքը, <<Չափումների միասնականության ապահովման մասին>> ՀՀ օրենքը և <<Համապատասխանության գնահատման մասին>> ՀՀ օրենքը, այսպես կոչված, հորիզոնական օրենքներ են: Ոլորտային օրենսդրությունը սահմանում է տեխնիկական պահանջներ, ներառյալ՝ պարտադիր սերտիֆիկացումը: 2010թ.-ի ապրիլի դրությամբ ընդունվել է ընդհանուր առմամբ 63 տեխնիկական կանոնակարգեր: 2004թ.-ից արտադրանքի 33 տեխնիկական կանոնակարգեր մոտարկվել են միջազգային ստանդարտներին և ԵՄ դիրեկտիվներին: Արդյունաբերական արտադրանքների համապատասխանության գնահատման հիմքում ընկած են ԵՄ նոր մոտեցման մոդուլները, իսկ պարենային, կոսմետիկ ու քիմիական արտադրանքների դեպքում՝ ԻՍՈ/ԻԷԿ (ISO/IEC) 67-րդ ուղեցույցի սխեմաները:

Հայաստանի Հանրապետությունում հետևյալ 9-ը նախարարությունները մշակում են տեխնիկական կանոնակարգեր.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը,
- ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը,
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը,
- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը,
- ՀՀ բնապահպանության նախարարությունը,
- ՀՀ առողջապահության նախարարությունը,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,
- ՀՀ քաղաքաշինության նախարարությունը,
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը։

Ոլորտային օրենսդրության կիրարկումը վերահսկում են այս նախարարությունների կազմում ստեղծված տեսչությունները։ Այդուհանդերձ, տարբեր ոլորտներում արդեն ընդունված տեխնիկական կանոնակարգերի մեծ մասի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի և սպառողների իրավունքների պաշտպանության պետական տեսչությունը։
Երկրում գործում են պետական և մասնավոր փորձարկման լաբորատորիաներ ու սերտիֆիկացման մարմիններ՝ արտադրանքի, ծառայությունների և կառավարման համակարգերի համար։ 2010թ.-ի ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ազգային հավատարմագրում են ստացել 67 լաբորատորիաներ և 17 սերիտիֆիկացման մարմիններ։ Սերտիֆիկացման ամենախոշոր և ամենակայուն ազգային մարմնի համբավ ունի ստանդարտների ազգային ինստիտուտը։ Տեխնիկական հսկողությունների իրականացման համար հավատարմագրեր է շնորհում նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը։ Կա նաև արտերկրում և միջազգայնորեն ճանաչված հավատարմագրում ունեցող մեկ սերտիֆիկացման մարմին։
Որոշ պետական փորձարկման լաբորատորիաներ գործում են որպես համապատասխան ոլորտների հենակետային լաբորատորիաներ։ Դրանք են՝

Հենակետային լաբորատորիա	Պատասխանատու նախարարություն
<<Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն>> ՓԲԸ – Վերլուծական լաբորատորիայի մասնաճյուղ	ՀՀ առողջապահության նախարարություն
<<Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ	ՀՀ առողջապահության նախարարություն
<<Հիվանդությունների վերահսկողության և կանխարգելման կենտրոն>>	ՀՀ առողջապահության նախարարություն
<<Սերմերի գործակալություն>> ՊՈԱԿ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
<<Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայություն>> ՊՈԱԿ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
<<Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն>> ՊՈԱԿ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
<<Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ	ՀՀ բնապահպանության նախարարություն

2.1 Առկա համակարգի ինքնագնահատումը

Վաղուց արդեն ակնհայտ է, որ անհրաժեշտ է վերանայել առկա համակարգի կառուցվածքը։ Այս տեսակետն արտահայտում են ստանդարտացումից, չափագիտությունից, հավատարմագրումից և սերտիֆիկացումից օգտվողները։ Մյուս կողմից, ՀՀ կառավարության ներքո էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող քաղաքականությունները ցույց են տվել, որ անհրաժեշտ է որակի ենթակառուցվածքը համապատասխանեցնել դրանց մի շարք ոլորտներում առնչվող բարեփոխումներին, ինչպիսիք են՝ <<Գործարար միջավայրի բարելավման>> և <<Տեսչական>> բարեփոխումները։ Կառավարությունը երեք տարի անընդմեջ ծրագրում է վերանայել որակի

ենթակառուցվածքների վերաբերյալ հորիզոնական օրենսդրությունը, սակայն դեռ հանդես չի եկել օրենսդրական առաջարկությամբ, քանի որ վերանայման գործընթացի արդյունքում վերահաստատվեց այն տեսակետը, որ անհրաժեշտ է ավելի խորը վերլուծել որակի ենթակառուցվածքը՝ անկախ փորձագետների աջակցությամբ:

Գործող համակարգի ինքնագնահատման պաշտոնական գործընթացը ձեռնարկվել է միայն 2010թ.-ի փետրվարին, երբ էկոնոմիկայի նախարարության ու շահագրգիռ կառույցների դատին հանձնվեցին Եվրահանձնաժողովի՝ առևտրին առնչվող փաստահավաք առաքելության եզրակացությունները և միջազգային փորձագետների՝ ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտների գնահատման զեկույցները: Այս գնահատումները կներկայացվեն ստորև: Ինքնագնահատման գործընթացն իրականացրել է ԵՄ-Հայաստան ԽՀԱԱՀ բանակցությունների նախապատրաստական աշխատանքների նպատակով ստեղծված առևտրի տեխնիկական խոչընդոտներով (ԱՏԽ) զբաղվող միջգերատեսչական աշխատանքային խումբը:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը, Ստանդարտների ազգային ինստիտուտը, Չափագիտության ազգային ինստիտուտը, Հավատարմագրման գործակալությունը և Շուկայի և սպառողների իրավունքների պաշտպանության պետական տեսչությունը համամիտ են, որ բարեփոխման կարիք կա: ԱՏԽ աշխատանքային խմբի իրականացրած ռազմավարական վերլուծության արդյունքում սահմանվել են այդ բարեփոխման ցանկալի արդյունքները, մասնավորապես՝

- նոր իրավական հիմք `տեխնիկական կանոնակարգման, շուկայի վերահսկողության, ստանդարտացման, չափագիտության, համապատասխանության գնահատման, այդ թվում՝ հավատարմագրման համար,
- որակի ենթակառուցվածքի հիմնական գործող սուբյեկտների միջև գործառույթների և իրավասությունների վերաբաշխում, այդ թվում՝ ինստիտուցիոնալ կառուցվածքի շտկում և նոր ծառայությունների զարգացում,
- օրենսդրության և գործելակերպերի համապատասխանեցում միջազգային ու եվրոպական պահանջներին,
- կարողությունների հզորացում և մարդկային ռեսուրսների զարգացում՝ միջազգային և եվրոպական փորձը կիրառելու համար,
- ներդրումներ՝ փորձարկման և չափագիտության նյութական բազան բարելավելու նպատակով,
- ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման մարմինների ավելի մեծամասշտաբ ինտեգրում համապատասխան միջազգային կազմակերպություններին,
- որակի ենթակառուցվածքի ծառայությունների միջազգային ճանաչում:

2.2 Եվրահանձնաժողովի առևտրին առնչվող փաստահավաք առաքելության արդյունքները

Եվրահանձնաժողովի 2009թ.-ի փետրվարին իրականացված առևտրին առնչվող փաստահավաք առաքելության հատուկ նպատակն էր գնահատել Հայաստանի պատրաստվածությունը ԵՄ-Հայաստան ԽՀԱԱՀ-ի շուրջ բանակցությունների մեկնարկին: Քանի որ ստանդարտներն ու համապատասխանության գնահատումը կարևորագույն դեր են խաղում առևտրում, հետևաբար, գնահատման ընթացքում ուսումնասիրվեցին ԱՏԽ ոլորտի օրենսդրական և ինստիտուցիոնալ խնդիրները: Գնահատման արդյունքում պարզվեց, որ Հայաստանի որակի ենթակառուցվածքի ներկայիս համակարգում առկա են բազմաթիվ լուրջ թերություններ և կառուցվածքային հիմնախնդիրներ.

- *<<Արդյունաբերական արտադրանքի անվտանգության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերը դեռ չեն ներդաշնակեցվել ԵՄ-ում գործող կանոնակարգերին>>:*
- *<<Հայաստանը պետք է ապահովի արտադրանքի անվտանգությանը վերաբերող գործող և նոր օրենսդրության (ներդաշնակեցված ԵՄ ընդհանուր օրենսդրության ու միջազգային ստանդարտների հետ) արդյունավետ իրականացում և կիրարկում: Դրան հասնելու համար*

անհրաժեշտ է համապատասխան ենթակառուցվածք և ճիշտ գործող ինստիտուցիոնալ համակարգ։ Սակայն, այս փուլում, համապատասխանության գնահատման և շուկայի վերահսկողության ինստիտուցիոնալ համակարգերը (արտադրանքի անվտանգության կանոնակարգերի կիրարկում) ինչպես հարկն է զարգացած չեն և, հետևաբար, ի զորու չեն սպառողի պաշտպանության պատշաճ մակարդակ ապահովել Հայաստանում>>։

- *<<Անհրաժեշտ է շարունակել զարգացնել տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտացման, հավատարմագրման, սերտիֆիկացման և չափագիտության ոլորտների ենթակառուցվածքը։ Մասնավորապես, ստանդարտացման (Ստանդարտացման ազգային ինստիտուտ) ու հավատարմագրման (Հավատարմագրման գործակալություն) համար պատասխանատու մարմինները պետք է ձեռք բերեն իրական քաղաքական անկախություն>>։*

Քանի որ որակի ենթակառուցվածքը փոխկապակցված համակարգ է, հետևաբար, այս համակարգի բարեփոխման առաջնային խնդիրը պետք է լինի կառուցվածքի և նրա բաղադրիչների միջև կապակցվածության շտկելը՝ որպես վարչական կարողությունները զարգացնելու, ներդաշնակեցումը հնարավոր դարձնելու և ներդաշնակեցված օրենսդրությունն իրականացնելու նախապայման։

2.3 Միջազգային փորձագետների կատարած գնահատման համառոտագիր

Կառուցվածքային բարեփոխում իրականացնելու համար անհրաժեշտ է լիովին ըմբռնել առկա համակարգի թերությունները։ Այդ պատճառով, ՀՀ էկոնոմիկայի նախարարության խնդրանքով, Համաշխարհային բանկը, Գերմանիայի չափագիտության ինստիտուտի (PTB) հետ մեկտեղ, 2009թ.-ի հոկտեմբերից՝ 2010թ.-ի փետրվարն ընկած ժամանակահատվածում գնահատեցին Հայաստանի որակի ենթակառուցվածքի արդի վիճակը։ Ընդհանուր ախտորոշման (տես՝ Հավելվածը) հիմքում ընկած են պահանջարկի վերլուծության, ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտների վիճակի գնահատման արդյունքները։ Գնահատման հիմնական եզրակացությունները հետևյալն են.

- *Կազմակերպությունները լրջորեն թերանում են որակի ժամանակակից գործելակերպերը կիրառելու գործում։*
- *Որակին առնչվող ծառայությունների, ինչպիսիք են՝ սերտիֆիկացումը, փորձարկումը և ստուգաճշտումը, թույլ շուկան արտադրանքի որակի հետ կապված մարտահրավերներ է առաջադրում Հայաստանում։*
- *Կազմակերպություններում կիրառվող որակի ապահովման գործելակերպերի և որակին առնչվող այլ ծառայությունների թերությունները պայմանավորված են ազգային որակի ենթակառուցվածքի պետական կառույցների բացթողումներով։*
- *Ներկա օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակը հիմնականում չի համապատասխանում միջազգային լավագույն փորձին և հանգեցնում է անարդյունավետ ազգային որակի ենթակառուցվածքի։*
- *Ներկայիս Չափագիտության ազգային ինստիտուտը ավելի շատ պետական վերահսկողության գործիք է, քան արդյունաբերական մրցակցությունը սատարող միջոց։*
- *Ստանդարտների ազգային ինստիտուտը շահերի բախման առարկա է և չի մշակում տնտեսության կարիքներն արտացոլող ստանդարտներ։*
- *Հավատարմագրման գործակալությունը չի մատուցում տեխնիկապես հուսալի կամ անկողմնակալ հավատարմագրման ծառայություններ և արդյունքում՝ չի ծառայում տնտեսության կարիքներին ու ճանաչված չի արտասահմանում։*

Այլ դոնոր կազմակերպություններ և միջազգային փորձագետներ հաստատում են այս եզրակացությունները։ Սրանց թվում են ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը

(ՄԱԿ ԱԶԾ/UNIDO), Առևտրի միջազգային կենտրոնը (ԱՄԿ/ITC), Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ/IFC), Գերմանական տեխնիկական համագործակցությունը (ԳՏՀ/GTZ), ՀՀ-ում ԵՄ խորհրդատվական խումբը և Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնը (AEPLAC)։ ԵՄ-ի և Հայաստանի միջև ԽՀԱԱՀ-ի շուրջ բանակցությունների մեկնարկի տեսանկյունից խնդրահարույց է համարվել առևտրի տեխնիկական խոչընդոտների ոլորտը։ Այս առումով, ԵՄ խորհրդատվական խումբը Հայաստանում գտնում է, որ ԽՀԱԱՀ գործընթացի մեկնարկն անհնար է առանց որակի ենթակառուցվածքի բարեփոխման։ ԽՀԱԱՀ-ի կնքումը ենթադրում է կանոնակարգերի, ստանդարտների և գործելակերպերի աստիճանական մոտարկում։ Մոտարկման տեմպերը, համապատասխանաբար՝ բանակցությունները սկսելու ու վարելու մասով, կախված են յուրաքանչյուր ԵՄ գործընկեր երկրից։ Մի կողմից, ԽՀԱԱՀ-ը կարող է շարժիչ ուժ հանդիսանալ բարեփոխումների համար, իսկ մյուս կողմից՝ որակի ենթակառուցվածքի բարեփոխումը առանցքային է ԽՀԱԱՀ-ի գործընթացի համար։

2.4 Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն (ՈՒԹՀՎ /SWOT վերլուծություն)

	Դրական	Բացասական
Ներքին	*Ուժեղ կողմեր*	*Թույլ կողմեր*
	➢ Առկա են որակի ենթակառուցվածքի հիմնական բաղադրիչները ➢ Բաղադրիչների միջև հաստատված որոշակի պատշաճ կերպով կապեր ➢ Որոշ հիմնական միջազգային պահանջներ արդեն իսկ ներառված են օրենսդրության մեջ ➢ Որակի ենթակառուցվածքի որոշ գործող սուբյեկտներ արդեն ներգրավված են միջազգային համագործակցության մեջ	➢ Անհամապատասխան հորիզոնական օրենսդրություն ➢ Կազմակերպական և կատարողական թերություններ, ինչպես նաև որակի ենթակառուցվածքի ժամանակակից համակարգին բնորոշ մատուցվող ծառայությունների բացակայություն ➢ Ընդհանուր առմամբ, սարքավորումների բազայի բացակայություն կամ հնացած սարքավորումներ ➢ Համակարգում թերի պատրաստվածություն ունեցող կադրեր և ցածր աշխատավարձեր պետական հատվածում ➢ Մնացուկային ներքին ուժեր, որոնք որակի ենթակառուցվածքն ընկալում են ոչ թե որպես ծառայություն մատուցող համակարգ, այլ որպես վերահսկողության լծակ ➢ Երկրում որակի ենթակառուցվածքի մասին իրազեկության ցածր մակարդակ ➢ Համեմատաբար անտարբեր մասնավոր հատված
Արտաքին	*Հնարավորություններ*	*Վտանգներ/Սպառնալիքներ*
	➢ Բարեփոխումն իրականացնելու կառավարության վճռականությունը և տնտեսական հզոր խթաններ ➢ ԵՄ-Հայաստան ԽՀԱԱՀ գործընթացը կարող է ծառայել որպես շարժիչ ուժ ➢ Արտաքին տեխնիկական աջակցության և ֆինանսավորման հնարավորություններ ➢ Միջազգային և եվրոպական	➢ Փոփոխությունների նկատմամբ հնարավոր ընդդիմություն այն ուժերի կողմից, որոնք օգուտ են ստանում գործող համակարգից ➢ Հնարավոր են դժվարություններ կապված անհրաժեշտ խոշոր ներդրումների ապահովման հետ։ ➢ Բարեփոխումը չշարունակելու ռիսկ, քանի որ ռազմավարության իրականացման համար

	կազմակերպություններին անդամակցելու հնարավորություն	կպահանջվի առնվազն 10 տարի

3. Հայաստանի որակի ենթակառուցվածքը միջազգային և ԵՄ պահանջներին համապատասխանեցնելու տարբերակները

3.1 Նմանատիպ նախապատմություն և կարիքներ ունեցող երկրների փորձը

Հայաստանում որակի ենթակառուցվածքի վիճակն առանձնահատուկ է, սակայն՝ ոչ եզակի: Այլ երկրներում խորհրդային համակարգից միջազգային ստանդարտների անցնելու գործընթացը կա՛մ ավարտված է, կա՛մ իրականացման փուլում է:

Երեք Բալթյան երկրները՝ Էստոնիան, Լատվիան և Լիտվան, արդեն իսկ մշակել են ժամանակակից և միջազգայնորեն ինտեգրված համակարգեր: Այս երկրներում տրվող սերտիֆիկատներն ընդունելի են աշխարհի ցանկացած մասում: Նմանատիպ արդյունքների հասնելու համար այս երկրների կառավարությունները 1991-2004թթ.-ի ընթացքում իրականացրել են լուրջ օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ:

ԱՀԿ անդամ հանդիսացող ԱՊՀ երկրներից Մոլդովան և Ուկրաինան կայուն առաջընթաց են արձանագրում միջազգային և ԵՄ ստանդարտներն ընդունելու գործընթացում: Այս երկրներում բարեփոխումները դեռևս ավարտված չեն, սակայն արդեն իսկ արձանագրվել են որոշակի արդյունքներ, և երկները օգտվում են դրանցից:

Հայաստանի հարևան երկրները նույնպես աշխատանքներ են իրականացնում միջազգային և եվրոպական ստանդարտների ուղղությամբ:

Տնտեսական արդյունավետության առումով անկասկած է, որ Հայաստանը պետք է ավելի արագ շարժվի այս ուղղությամբ:

3.2 Միջազգային փորձագետների առաջարկությունները

Միջազգային փորձագետներն առաջարկում են Հայաստանի որակի ենթակառուցվածքն ամբողջովին համաձայնեցնել միջազգային և եվրոպական պահանջներին:

- *Հայաստանը պետք է բարեփոխի ազգային որակի ենթակառուցվածքը՝ իր տնտեսության կարիքները բավարարելու, արտահանումը խթանելու և ԵՄ-ի հետ Խորը ու Համապարփակ Ազատ Առևտրի Համաձայնագրի պահանջները (ԽՀԱԱՀ) կատարելու նպատակով:*
- *Անհրաժեշտ է վերաձևակերպել ազգային օրենքները՝ միջազգային լավագույն փորձին համապատասխանելու նպատակով:*
- *Անհրաժեշտ է վերակառուցել ազգային որակի ենթակառուցվածքի ինստիտուցիոնալ դաշտը՝ քաղաքական անկախություն, թափանցիկություն և անկողմնապահություն ապահովելու նպատակով:*
- *Անհրաժեշտ է բարեփոխել Չափագիտության ազգային ինստիտուտ և չափումների առաջնային ոլորտներում հետամուտ լինել միջազգային ճանաչման:*
- *Անհրաժեշտ է փոխել ստանդարտների ազգային մարմնի՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի, կառուցվածքը, նվազեցնել աշխատակիցների թվաքանակը, վերանայել կառավարման և ղեկավարման ձևը՝ դրանցում միջազգային նորմերն արտացոլելու նպատակով:*
- *Միջնաժամկետ ապագայում միջազգային ճանաչման հասնելու նպատակով՝ անհրաժեշտ է անհապաղ հիմնել նոր և անկախ հավատարմագրման մարմին:*

- *Կառավարությունը պետք է հստակեցնի տեխնիկական կանոնակարգերի, սպառողների պաշտպանության և շուկայի վերահսկողության համակարգի կազմակերպումը և ապահովի դրա համատեղելիությունը միջազգային և Եվրոպական նորմերին։*
- *Բարելավելով որակը և բարձրացնելով սպառողների պաշտպանության մակարդակը Հայաստանում՝ հնարավոր կլինի զարգացնել երկրի փորձարկման և ստուգաճշտման լաբորատորիաների հզորությունը։*

Այս առաջարկությունները հնարավոր կլինի իրականացնել, եթե կառավարությունը ձեռնարկի հետևյալ միջոցառումները.

- Վերանայել որակի ենթակառուցվածքի ներկայիս կառուցվածքը և ներքին կապերը՝ հնարավոր բոլոր շահերի բախումներից խուսափելու և գործառույթները համապատասխանաբար բաշխելու նպատակով։
- Ստեղծել ազգային հարթակ՝ որակի քաղաքականություն և համապատասխան ռազմավարություններ սահմանելու նպատակով, օրինակ՝Որակի ազգային խորհուրդ։
- Նշանակել որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգերի ազգային համակարգող։
- Վերակառուցել բոլոր առանցքային կառույցները՝ ստանդարտների ազգային մարմին, չափագիտության ազգային ինստիտուտ և հավատագրման ազգային մարմին (որպես իրավաբանական անձ), ապահովել նրանց տեխնիկական, քաղաքական և ֆինանսական անկախությունը և ինքնավարությունը, ապահովել շահագրգիռ կողմերի ներկայացուցչությունը գործընթացներում և կառավարման գործում։
- Համապատասխան բարեփոխումներ իրագործելուց հետո, Ստանդարտների ազգային ինստիտուտը նշանակել որպես ստանդարտների ազգային մարմին։
- Համապատասխան բարեփոխումներ իրագործելուց հետո, Չափագիտության ազգային ինստիտուտը նշանակել որպես չափագիտության ազգային ինստիտուտ։
- Իրավաբանական անձ հանդիսացող հավատարմագրում կատարելու իրավասություն ունեցող նորաստեղծ մարմինը նշանակել որպես Հավատարմագրման ազգային մարմին։
- Վերանայել «Ստանդարտացման մասինե ՀՀ օրենքը, «Չափումների միասնականության ապահովման մասինե ՀՀ օրենքը և «Համապատասխանության գնահատման մասինե ՀՀ օրենքը, մշակել հավատարմագրման մասին նոր օրենք։ Դիտարկել որակի ենթակառուցվածքի "միասնական" օրենք մշակելու տարբերակը, որտեղ կսահմանվեն ինստիտուցիոնալ հարցերը։
- Մշակել և ընդունել անվտանգության վերահսկողության և որակի ապահովման կառավարության քաղաքականությունը, և մասնավոր հատվածի համար այն իրագործելու խթաններ ստեղծել։
- Որակի ենթակառուցվածքի տնօրինման տակ գտնվող ռեսուրսների օպտիմալ վերաբաշխման շնորհիվ ֆինանսական կենսունակության ապահովում։

Տեսականորեն, էական չէ, թե առանցքային հաստատությունները՝ ստանդարտների ազգային մարմինը, չափագիտության ազգային ինստիտուտը և հավատարմագրման ազգային մարմինը, ինչպիսի սեփականության և կառավարման ձև ունեցող հաստատություններ են՝ պետական, պետական մասնակցությամբ, թե մասնավոր։ Առավել էական է, որ այս հաստատությունները կարողանան կատարել միջազգային չափանիշներով սահմանված գործառնական պահանջները։ Գործնականում, ազգային իրավական դաշտը և պետական կառավարման ձևը պետք է լրջորեն վերանայվի՝ ինստիտուցիոնալ կառուցվածքի ամենաօպտիմալ լուծումը գտնելու համար։

3.3 Առանցքային որոշումներ և հնարավոր տարբերակների վերլուծություն

3.3.1 Որակի ենթակառուցվածքի բարեփոխման շրջանակը

Որակի ենթակառուցվածքի բարեփոխման շրջանակում պետք է պարտադիր կերպով ներառվեն ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության և սերտիֆիկացման ոլորտները: Ավելին, պետք է ավելացնել նաև տեխնիկական կանոնակարգման և շուկայի վերահսկողության ոլորտները՝ անվտանգության վերահսկողության և որակի ապահովման համընդհանուր և հետևողական քաղաքականություն մշակելու նպատակով: Այս ոլորտներին կարելի է անդրադառնալ երկու ճանապարհով՝ա) պահպանել ներկայիս օրենսդրության մեջ կիրառված մոտեցումը կամ բ) կիրառել միջազգային և եվրոպական կազմակերպությունների մոտեցումները:

Առաջին տարբերակը նշանակում է «ոչ մի փոփոխություն»:

Երկրորդ տարբերակը ենթադրում է հստակ մտածելակերպ և ամբողջ աշխարհում ընդունված հայեցակարգերի պատշաճ և ամբողջական ընդունում:

Անհրաժեշտ է պարզաբանել «անվտանգության վերահսկողություն» հասկացությունը: Տեխնիկական կանոնակարգերի կիրառման գործող մոտեցման շրջանակներում պարենային և ոչ պարենային արտադրանքի միջև ոչ մի տարբերակում չկա: Սակայն արտադրանքի այս երկու լայն խմբերը հստակ տարանջատված են եվրոպական և միջազգային մակարդակում և դրանց նկատմամբ կիրառվում են տարբեր կարգավորող մոտեցումներ: Սույն ռազմավարության շրջանակներում կարելի է կիրառել երկու տարբերակ՝

ա) ամբողջովին վերափոխել պարենային և ոչ պարենային արտադրանքը կարգավորող գործող համակարգը,

բ) արտադրանքը դիտարկել առևտրի տեխնիկական խոչընդոտների տեսանկյունից:

Առաջին դեպքում, որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարության շրջանակներում տեխնիկական կանոնակարգերում պետք է ներմուծվեն սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներ, որը անհամատեղելի է միջազգային գործելակերպերին: Երկրորդ նախընտրելի տարբերակի դեպքում, բարեփոխման ռազմավարության առանցքը կլինի ոչ պարենային արտադրանքը, իսկ գյուղատնտեսական արտադրանքը կդիտարկվի սոսկ առևտրի տեխնիկական խոչընդոտների տեսանկյունից: Սննդամթերքի և կերերի անվտանգության և որակի կանոնակարգման խնդիրները պետք է դիտարկել առանձին:

Բացի այդ, որակի ենթակառուցվածքի մատուցված ծառայությունները նպաստում են սպառողների պաշտպանությանը: Առաջարկվող բարեփոխումն ազդեցություն կունենա սպառողների պաշտպանության ոլորտի վրա այն առումով, որ Հայաստանում կգործեն համապատասխանության գնահատման հուսալի ծառայություններ, որոնք կապահովեն սպառողական ապրանքների անվտանգության վերահսկողությունը: Սույն ռազմավարության շրջանակում չեն քննարկվի սպառողների իրավունքներին առնչվող այլ՝ ոչ տեխնիկական խնդիրներ:

3.3.2 Որակի ենթակառուցվածքի բարեփոխման ժամանակացույցը

Հաշվի առնելով գործող որակի ենթակառուցվածքի իրական վիճակը և դասեր քաղելով միջազգային փորձից՝ բարեփոխման գործընթացը կշարունակվի առնվազն 10 տարի:

Այնուամենայնիվ, այս ժամանակահատվածում կառույցների բարեփոխումը կարելի է իրականացնել երկու տարբեր եղանակով՝

ա) բարեփոխումը սկսել որակի ենթակառուցվածքի առանցքային հատվածներից՝ ստանդարտացում, չափագիտություն և հավատարմագրում, այնուհետև ընդգրկել շահագրգիռ նախարարություններին և համապատասխանության գնահատման մարմիններին, և

բ) բոլոր կառույցներում իրականացնել համաժամանակյա բարեփոխում:

Բարեփոխման կազմակերպման առումով առաջին տարբերակն ավելի քիչ դժվարություններ կառաջացնի: Այս տարբերակի առավելությունը կայանում է նրանում, որ համապատասխանության գնահատման մարմինները անցումային փուլում ավելի շատ ժամանակ կունենան՝ միջազգային ստանդարտներին և պահանջներին համապատասխանելու համար: Այս դեպքում, սակայն,

գործընթացը կարող է երկարել: Երկրորդ տարբերակի դեպքում բարեփոխման կազմակերպման գործընթացն ավելի դժվար կլինի: Հետևաբար, անհրաժեշտ կլինի ստեղծել բարեփոխման իրականացման առավել բարդ կառույց: Այս մոտեցման դեպքում, հնարավոր է պահանջվի առավել փոքր ժամանակահատված, սակայն այս տարբերակը կգործի միայն այն դեպքում, եթե բոլոր կառույցները բարեփոխվեն արդյունավետ և ներդաշնակ կերպով:
Կառույցների բարեփոխումը կիրականացվի քայլ առ քայլ: Ինստիտուցիոնալ բարեփոխումը, ընդհանուր առմամբ, չի կարող տևել 3-4 տարուց ավել, քանի որ մինչ այդ չբարեփոխված կառույցները կշարունակեն խոչընդոտել ողջ բարեփոխման գործընթացին:

3.3.3 Հայաստանի արտահանման գերակա ուղղությունների և որակի ենթակառուցվածքի բարեփոխման համատեղ արդյունավետությունը

ԵՄ շուկա արտադրանքի արտահանումը Հայաստանի համար առաջնահերթություն է: ԵՄ-Հայաստան ԽՀԱԱՀ-ի շրջանակներում սահմանվել են արդյունաբերության գերակա ոլորտները, սակայն դրանք առաջիկայում կվերանայվեն և կհրապարակվեն:
Ծախսային առումով արտահանումն արդյունավետ կլինի, եթե առկա լինեն համապատասխանության գնահատման ազգային մարմիններ, որոնց տեխնիկական կարողունակությունը հաստատված կլինի միջազգայնորեն ճանաչված հավատարմագրման միջոցով: Ազգային հավատարմագրման սերտիֆիկատները միջազգային ճանաչում ձեռք կբերեն 7-8 տարուց ոչ շուտ: Նույնը վերաբերում է չափագիտության ոլորտին, որտեղ անցումային փուլը, ելնելով մեծ ներդրումների անհրաժեշտությունից, կարող է ավելի երկար տևել: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական և վերամշակված պարենային արտադրանքին, ապա ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության աջակցությամբ հենակետային լաբորատորիաների արդիականացումը նույնպես դեր կխաղա: Հետևաբար, կարելի է շարժվել երկու հնարավոր ուղղություններով.
ա) սպասել, մինչ ազգային հավատարմագրման և չափագիտության համակարգերը կայանան և տրամադրեն միջազգայնորեն ճանաչված սերտիֆիկատներ,
բ) կիրառել ժամանակավոր արագ լուծումներ՝ օգտվելով միջազգայնորեն ճանաչված հավատարմագրման մարմինների, չափագիտության ինստիտուտների և ստուգաճշտման լաբորատորիաների ծառայություններից:

Սույն ռազմավարության ներքո ընտրվել է երկրորդ տարբերակը (ներկայացվում է 4-րդ գլխի 4.5 կետում), քանի որ առաջին տարբերակը ենթադրում է հետաձգում 7-8 կամ ավելի տարիներով, որը ոչ նպաստավոր է գործարար հատվածի համար:

3.3.4 Որակի հարցերով խորհրդատվական մարմինը

Անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ հիմնել բարձրագույն խորհրդատվական մարմին՝ Որակի ազգային խորհուրդ: Այն կարող է լինել ա) նոր մարմին կամ բ) գործող մարմիններից մեկը կարող է ստանձնել այդ իրավասությունները: Որոշում է կայացվել ընտրել առաջին տարբերակը՝ ստեղծել հատուկ մարմին:

3.3.5 Քաղաքականություն մշակող և համակարգող մարմինը

Ճիշտ և բնական կլինի, որ որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման ոլորտը համակարգի ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Գործող օրենսդրության համաձայն՝ նախարարությունը «ստանդարտների ազգային մարմինն է, «չափագիտության ազգային մարմինն է, «սերտիֆիկացման ազգային մարմինն է, իսկ հավատագրման մարմինը գտնվում է նախարարության ենթակայության ներքո: Բոլոր այս գործառնական ֆունկցիաները պետք է փոխանցվեն բարեփոխված ինստիտուտներին: Նախարարությունը պետք է կենտրոնանա քաղաքականության մշակման և համակարգման վրա, ինչպես ներկայացվում է սույն ռազմավարության 4-րդ գլխում:

3.3.6 Ստանդարտների ազգային մարմնի բարեփոխումը

Վերջին հաշվով, Ստանդարտների ազգային ինստիտուտը պետք է դառնա ստանդարտների ազգային մարմին՝ միջազգային ստանդարտները որդեգրելու և ընդունելու հզորացված կարողությամբ: Կառույցի՝ ներկայիս պետական փակ բաժնետիրական ընկերություն իրավական կարգավիճակը թույլ չի տալիս ստանդարտացման գործընթացի շահագրգիռ կողմերին մասնակցել այս մարմնի ղեկավարման աշխատանքներին: Բացի այդ, սեփականության ձևից ելնելով, պետությունը պահպանում է մենաշնորհը և ազդեցությունը այս մարմնի գործունեության վրա:

Հայաստանում առկա կազմակերպաիրավական ձևերից կարելի է դիտարկել երկուսը.

Իրավաբանական անձի տեսակը	<<Կողմ>> փաստարկ	<<Դեմ>> փաստարկ
ա) Հիմնադրամ՝ ըստ հիմնադրամների մասին օրենքի	• Մասնակցության հավասար հնարավորությունների ապահովում • Հիմնադրամի կողմից ընկերության հիմնում՝ սերտիֆիկացման գործն ինքնուրույն իրականացնելու նպատակով	• Ստանդարտների մարմնի վարչական աշխատանքները պետական բյուջեից ֆինանսավորելու հնարավորության բացակայություն
բ) Հասարակական միավորում՝ ըստ հասարակական կազմակերպությունների մասին օրենքի	• Կատարյալ համապատասխանություն ստանդարտների ազգային մարմնին ներկայացվող պահանջներին • Պետական օժանդակության տրամադրում, եթե սահմանված է օրենքով • Հավասար իրավունքներ և պարտականություններ բոլոր անդամների համար և պետության գերիշխող դիրքն արգելող դրույթ • Հասարակական ասոցիացիայի կողմից ընկերության ստեղծում՝ սերտիֆիկացման գործն ինքնուրույն իրականացնելու նպատակով	• Հասարակական միավորման անդամ կարող են դառնալ միայն ֆիզիկական անձինք

Քանի որ այս տարբերակներում ներկայացված իրավական կարգավիճակները նպատակահարմար և տեղին չեն, ուստի առաջարկվում է մեկ այլ՝ երրորդ տարբերակ. ինստիտուտի հիմնում ստանդարտացման մասին օրենքի հատուկ սահմանված դրույթների համաձայն: Այս տարբերակը սահմանափակում չունի, քանի որ օրենքի դրույթները համապատասխանեցված են լինելու: Սա ռազմավարությունում ընտրված տարբերակն է և ներկայացվում է 4-րդ գլխի 4.4.4 կետում:

Ներկայիս Ստանդարտների ազգային ինստիտուտի սերտիֆիկացման գործունեությունը պետք է առանձնացնել այդ ինստիտուտից: Այս տարանջատման հնարավոր հետևյալ տարբերակներն են՝

Տարանջատման տեսակը	<<Կողմ>> փաստարկ	<<Դեմ>>փաստարկ
ա) ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող նոր իրավաբանական անձ, որը փակ բաժնետիրական	• Սերտիֆիկացումից գոյացած եկամտի մուտքը պետական բյուջե պահպանվում է	• Անարդար մրցակցություն մասնավոր հատվածի հետ • Պահպանվում է հնարավոր շահերի

ընկերություն է		բախման վտանգը
ա1) ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող նոր իրավաբանական անձ՝ փակ բաժնետիրական ընկերություն, որի կառավարումը կոնցեսիայի պայմանագրով կիրականացնի մասնավոր սուբյեկտ	• Սերտիֆիկացումից գոյացած եկամտի մուտքը պետական բյուջե պահպանվում է • Պոտենցիալ շահերի բախման վտանգը հաջողությամբ լուծվում է	• Անարդար մրցակցություն մասնավոր հատվածի հետ
բ) Փակ բաժնետիրական ընկերություն հանդիսացող նոր իրավաբանական անձ, որը հետագայում պետք է սեփականաշնորհվի	• Պոտենցիալ շահերի բախումը վերանում է	• Պետական բյուջեից անհապաղ ֆինանսավորման անհրաժեշտություն, որը կփոխարինի սերտիֆիկացման գործունեության միջոցով ներկայում ստացվող եկամուտներին
գ) Փակ բաժնետիրական ընկերություն հանդիսացող նոր իրավաբանական անձ, որը հիմնվել և գործում է բարեփոխված Ստանդարտների ազգային ինստիտուտի ենթակայությամբ	• Պոտենցիալ շահերի բախման խնդիրը ժամանակավորապես լուծվում է երկու կազմակերպությունների միջև համապատասխան պաշտպանիչ միջոցառման շնորհիվ (ԻՍՕ անդամների կողմից կիրառվող գործելակերպ) • Ապահովվում է Ստանդարտների ինստիտուտի ֆինանսական կայունությունը։ Ցանկացած տարբերակի դեպքում հասույթը (ներառյալ սեփականաշնորհումից) պետք է ուղղվի ստանդարտացման և չափագիտության ինստիտուտների զարգացմանը։	• ԻՍՕ-ի էթիկայի կանոնները մասնակիորեն են պահպանվում • Շահերի բախման խնդիր է ծագում • Հետագայում անարդար մրցակցությանպահպանում • Կառավարման խնդիրներ և նվազագույն եկամուտ՝ կապված Ստանդարտների ինստիտուտի կարգավիճակի հետ

Ներկայացված ա) և գ) տարբերակների շուրջ փոխհամաձայնություն ձեռք չի բերվել, ուստի դուրս է մնում քննարկումից։ Տարբերակ բ) ամբողջովին կլուծի շահերի բախման հիմնախնդիրը, սակայն բյուջետային սահմանափակումների պատճառով ներկայում ցանկալի չէ կիրառել։ Այսպիսով, ընտրվել է ա1 տարբերակը, որը ներկայացվում է 4-րդ գլխի 4.4.2 կետում։

3.3.7 Չափագիտության ազգային ինստիտուտի բարեփոխումը

Չափագիտության ոլորտում հարկավոր է տարբերակել հետևյալ սուբյեկտներին.

- Չափագիտության ազգային ինստիտուտ, որը, որպես կանոն, պետական կազմակերպություն է։ Այս ինստիտուտը կարող է այլ ինստիտուտների փոխանցել

(պատվիրակել) չափագիտական որոշ առաջադրանքներ։ Այս դեպքում համակարգը կոչվում է չափագիտության բախշված համակարգ։

- Ստուգաճշտման լաբորատորիաներ, որոնք հիմնականում մասնավոր են։
- Օրենսդրական չափագիտության համապատասխանության գնահատման մարմիններ, որոնց մեծ մասը դեռևս պետական կազմակերպություններ են։
- Չափագիտական վերահսկողության պետական մարմիններ։

Քանի որ ներկայիս Չափագիտության ազգային ինստիտուտը, չնայած իր անվանմանը, ունի օրենսդրական չափագիտության ոլորտում համապատասխանության գնահատման գործառույթներ և կարողություններ, ապա առկա տարբերակները հետևյալն են՝

- Ունենալ երկու մարմիններ՝ վերանվանելով գործող ինստիտուտը, որը կզբաղվի օրենսդրական (իրավական) չափագիտությամբ, և ստեղծել նոր Չափագիտության ազգային ինստիտուտ,
- Բարեփոխել գործող ինստիտուտն այնպես, որ այն միաժամանակ կատարի թե՛ Չափագիտության ազգային ինստիտուտի և թե՛ օրենսդրական չափագիտության մասով համապատասխանության գնահատման մարմնի դեր։

Նոր <<Չափագիտության ազգային ինստիտուտի>> հիմնադրման դեպքում միակ տրամաբանական կազմակերպաիրավական ձևը պետական ոչ-առևտրային կազմակերպությունն (ՊՈԱԿ) է։ Գործող ինստիտուտի բարեփոխման դեպքում այն պետք է մնա փակ բաժնետերական ընկերություն։ Այս դեպքում բարեփոխված չափագիտության ազգային ինստիտուտը կարող է պատվիրակել գիտական չափագիտության աշխատանքները այլ կազմակերպություններին, որոնք պետք է ունենան բավարար ինքնավարություն, և դրա բյուջեն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն միջազգային չափագիտական կազմակերպությունների առաջարկություններին։
Չափագիտական վերահսկողության պետական մարմինը ՀՀ էկոնոմիկայի նախարարության Շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությունն է։ Վերջինիս կարգավիճակը փոփոխելու անհրաժեշտություն չկա։

Չափագիտության կազմակերպման ձևը	<<Կողմ>> փաստարկ	<<Դեմ>> փաստարկ
ա) Երկու մարմին՝ չափագիտության ազգային ինստիտուտ և համապատասխանության գնահատման մարմին՝ օրենսդրական չափագիտության ոլորտում	• Արդյունաբերական չափագիտության բնագավառում առավել արագ առաջընթացի հնարավորություն • Պակասում է պետական բյուջեի բեռը, քանի որ համապատասխանության գնահատման մարմինը կլինի ինքնաֆինանսավորվող	• Փոքր պետության համար ոչ բնորոշ լուծում։
ա1) Երկու մարմին՝ չափագիտության ազգային ինստիտուտ՝ համապատասխանության գնահատման մարմին՝ օրենսդրական չափագիտության ոլորտում	• Արդյունաբերական չափագիտության բնագավառում առավել արագ առաջընթացի հնարավորություն. • Գիտական	• Փոքր պետության համար ոչ բնորոշ լուծում։

	չափագիտության ոլորտում առանձին կարողությունների զարգացման հնարավորություն. • Պետական բյուջեի բեռի թեթևացում, քանի որ համապատասխանության գնահատման մարմինը կլինի ինքնաֆինանսավորվող	
բ) Մեկ մարմին՝ Չափագիտության ազգային ինստիտուտ, որի կազմում կգործի օրենսդրական չափագիտության համապատասխանության գնահատման մարմինը	• Ամենաընդունված տարբերակն է նման չափի և տնտեսությամբ պետությունների համար	• Կադրային քաղաքականության կտրուկ փոփոխությունների անհրաժեշտություն • Արդյունաբերական չափագիտության զարգացումը դանդաղեցնելու վտանգ՝
բ1) Մեկ մարմին՝ Չափագիտության ազգային ինստիտուտ, որը ներառում է նաև օրենսդրական չափագիտության համապատասխանության գնահատման մարմինը	• Արդյունաբերական չափագիտության մեջ առավել արագ առաջընթացի հնարավորություն. • Գիտական չափագիտության առանձին կարողությունների զարգացման հնարավորություն. • Պետական բյուջեի բեռի թեթևացում, քանի որ համապատասխանության գնահատման մարմինը կլինի ինքնաֆինանսավորվող	• Կպահանջվի գործող չափագիտության ազգային ինստիտուտի ամբողջական լուծարում

Ներկայացված ա, ա1, բ, բ1 տարբերակները արագընթաց զարգացման ներուժ պարունակող տարբերակներ են։ Տարբերակ բ1-ը, որը ենթադրում է գործող ինստիտուտի լուծարում, նպատակահարմար չէ, քանի որ կարող է հանգեցնել օրենսդրական չափագիտության գործունեության շարունակականության խափանմանը։ Ընտրվել է տարբերակ բ-ն, ներկայացվում է 4-րդ գլխում։

3.3.8 Հավատարմագրման ազգային մարմնի բարեփոխումը

Ազգային հավատարմագրման մարմինը պետք է ստեղծվի որպես առանձին իրավաբանական անձ։ ՀՀ էկոնոմիկայի և արտակարգ իրավիճակների նախարարությունները պետք է դադարեցնեն հավատարմագրման գործունեությունը։ Օրենսդրության մեջ պետք է կատարել անհրաժեշտ փոփոխություններ, որպեսզի երկրում համապատասխանության գնահատման մարմիններին

հավատարմագրման ծառայություններ մատուցի միայն նորաստեղծվելիք հավատարմագրման մարմնի կողմից։
Հաշվի առնելով Հայաստանի շուկայի ծավալները և հավատարմագրման ենթակա մարմինների հետագա պոտենցիալ քանակը՝ առաջարկվում է ձևավորել նոր Հավատարմագրման ազգային մարմին, որպես՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն։ Այս մոտեցման դրական կողմերից է նաև այն, որ կապահովվի պետական բյուջեի հաշվին կառույցի ֆինանսական կայունությունը և հնարավորություն կա հավատարմագրման վճարների աստիճանական բարձրացման։ Այնուհանդերձ, քանի դեռ օրենքով չի սահմանափակվել նախարարությունների կողմից հավատարմագրման գործունեությունը, հավատարմագրման որոշումների վրա քաղաքական ազդեցության ռիսկ կա։

3.3.9 Սննդամթերքի, անասնակերի և կենդանիների առողջության ազգային հենակետային լաբորատորիաների բարեփոխումը

Սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների ոլորտում իրավական մոտարկման գործընթացի արդյունքում կառավարության կողմից կնշանակվեն սննդամթերքի, անասնակերի և կենդանիների առողջության ազգային հենակետային լաբորատորիաներ՝ համաձայն թիվ 882/2004 (ԵՄ) կանոնակարգի։ Դրա անհրաժեշտությունը արդեն իսկ առկա է Հայաստանից ԵՄ արտահանման ժամանակ (օրինակ՝ ձուկ և ձկնամթերք)։ Նշանակված հենակետային լաբորատորիաները կստանձնեն մասնավոր և պետական լաբորատորիաների համակարգման և գիտելիքներ փոխանցման գործառույթներ։ Հենակետային լաբորատորիաները պետք է ստանան համապատասխան բավարար բյուջետային աջակցություն և պետք է ինտեգրվեն չափագիտության ազգային համակարգում՝ իրենց համապատասխան ոլորտում հենակետային չափումներ իրականացնելու նպատակով։
Այս լաբորատորիաների ներկայում ունեն տարբեր կազմակերպաիրավական կարգավիճակ՝ փակ բաժնետիրական ընկերություններ կամ պետական ոչ առևտրային կազմակերպություններ։ Այս իրավիճակը խնդրահարույց է, քանի որ պոտենցիալ հենակետային լաբորատորիաները շուկայում մրցում են պետական և մասնավոր լաբորատորիաների հետ։ Անարդար մրցակցությունը ստեղծում է շահերի բախում և թուլացնում է փորձարկման արդյունքների որակը։ Առանձին դեպքերում իրավական կարգավիճակի փոփոխության կարիք կա՝ դրանք պետական բաժնետիրական ընկերությունից վերափոխելով պետական ոչ-առևտրային կազմակերպության։ Կառավարության կողմից պետական ոչ-առևտրային կազմակերպությանը տրվող սուբսիդիաները կերաշխավորեն այդ լաբարատորիաների գործունեության կայունությունը և կվերացնեն դրանց առևտրայնացման միտումները։ Իրավակազմակերպչական ձևերի և գործառույթների փոփոխության վերաբերյալ որոշումները կկայացվեն յուրաքանչյուր դեպքի համար առանձին-առանձին՝ հիմք ընդունելով կարիքների և բացերի գնահատումները, ինչպես ներկայացվում է 4-րդ գլխի 4.4.1 կետում։

Որակի ենթակառուցվածքի բարեփոխման էությունը

4.1 Նպատակները

Որակի ենթակառուցվածքի բարեփոխուների համար կան երկու հիմնական դրդապատճառներ՝խթանել Հայաստանի արտահանման ներուժը զարգացած շուկաներ, և պայմաններ ստեղծել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում Հայաստանի արտադրողների մրցունակության բարձրացման համար։
Այս համատեքստում, բարեփոխումներն առանցքային նշանակություն կունենան ԵՄ-Հայաստան Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկի և հաջող իրականացման համար։ Բարեփոխումները հիմք կհանդիսանան ԵՀՔ գործողությունների ծրագրով առաջարկվող՝ ԵՄ-ի հետ Համապատասխանության գնահատման և արդյունաբերական արտադրանքի ընդունման համաձայնագրի շուրջ բանակցությունների համար։
Որակի ենթակառուցվածքի համակարգի բարեփոխումները կնպաստեն Հայաստանում՝

- տնտեսվարող սուբյեկտների վարչական ծանր բեռի կրճատմանը, որը պայմանավորվում է տեխնիկական կանոնակարգերով, հնացած ստանդարտներով և պարտադիր սերտիֆիկացման պահանջներով, որոնց գոյությունը չի հիմնավորվում Առևտրի համաշխարհային կազմակերպության ԱՏԽ համաձայնագրի պահանջների տեսանկյունից,

- սպառողների շահերի պաշտպանության մակարդակը բարձրացմանը՝ միջազգային լավագույն փորձի ներդրման և արտադրանքի անվտանգության և սպառողների պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը մոտարկելու միջոցով:

Այսպիսով, որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարության նպատակը տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության, սերտիֆիկացման և շուկայի վերահսկողության ազգային ընթացակարգերի արդիականացումն է՝ վերոնշյալ ներքին և արտաքին բնույթի խնդիրներին լավագույնս ծառայելու համար:

4.2 Որակի ենթակառուցվածքի առաքելությունը

Պատմականորեն, որակի ենթակառուցվածքը ստեղծվել է գործարար համայնքի կողմից գործարարության համար: Ժամանակակից կյանքում որակի ենթակառուցվածքի ծառայություններից օգտվողների կամ շահառուների շրջանակը գնալով ընդլայնվում է՝ ներառելով նաև պետությունը: Հայաստանի նման երկրներում, ուր որակի ենթակառուցվաքծի հիմնադիրը հանդիսանում է պետությունը, այսօր նույնպես ձգտում են որակի ենթակառուցվաքծը առավելագույնս ծառայեցնել գործարարության կարիքներին: Այպիսով, Հայաստանի որակի ենթակառուցվածքի առաքելությունը հաճախորդներին որակյալ ծառայություններ մատուցելն է: Հայաստանի որակի ենթակառուցվածքը պետք է համապատասխանի ազգային տնտեսության առանձնահատկություններին: Ընդ որում, որքան բարձր է տնտեսական աճը, այնքան մեծ է որակի ենթակառուցվածքի ծառայությունների պահանջարկը: Հայաստանի տնտեսության ծավալներն ունեն օբյեկտիվ սահմանափակումներ, ինչն անդրադառնում է նաև մեր որակի ենթակառուցվածքի վրա: Ակնհայտ է, որ որակի ենթակառուցվածքը սահմանափակվում է ներքին շուկայում առկա, պահանջարկ վայելող որոշակի կոնկրետ ծառայություններով և կարողություններով: Այնուհանդերձ, որակի ենթակառուցվածքը և մատուցվող ծառայությունները պետք է ունենան բարձր որակ, հիմնավորված գին և լինեն միջազգայնորեն ընդունելի՝ ծառայելով պետության և տնտեսվարողների կարիքներին, նպաստելով երկրում բարեկեցության աճին:

4.3 Բարեփոխման ռազմավարության ընտրությունը

4.3.1 Ուղղությունները

Որակի ենթակառուցվածքի բարեփոխումն իրականացվելու է երեք ուղղությամբ.

ա) Ուղղություն 1. Ստանդարտացում, չափագիտություն և հավատարմագրում

Սրանք որակի ենթակառուցվածքի առանցքային ոլորտներն են: Ինստիտուտները կվերակազմակերպվեն, կհզորացվեն դրանց կարողությունները: Ինստիտուտները կինտեգրվեն միջազգային համակարգին և աջակցություն կստանան միջազգային ճանաչում ստանալու հարցում: Այդ բնագավառներում լիովին կներդրվեն միջազգային և եվրոպական ստադարտները և գործելակերպերը:

բ) Ուղղություն 2. Տեխնիկական կանոնակարգում և շուկայի վերահսկողություն

Տեխնիկական կանոնակարգերի և շուկայի վերահսկողության միջոցով պետությունը փոխգործակցում է որակի ենթակառուցվածքի հետ: Տեխնիկական կանոնակարգերը աստիճանաբար կմոտարկվեն ԵՄ-ի տեխնիկական կանոնակարգերին, չնայած առաջնությունը կտրվի ԽՀԱԱՀ-ի որոշված արդյունաբերական ոլորտների կանոնակարգերին: Գործող տեխնիկական կանոնակարգերին բնորոշ բյուրոկրատական քաշքշուկը կնվազի համապատասխան օրենսդրության վերանայմանը զուգահեռ: Շուկայի վերհսկողությունը, մասնավորապես ոչ-պարենային ապրանքների մասով, կորդեգրի եվրոպական պահանջները և գործելակերպերը:

գ) Ուղղություն 3. Փորձարկում, տեխնիկական հսկողություն և սերտիֆիկացում

Փորձարկումը, տեխնիկական հսկողությունը և սերտիֆիկացումը անմիջականորեն ծառայում են որակի ենթակառուցվածքի շահառուներին: Լաբորատորիաների, տեխնիկական հսկողության ու սերտիֆիկացման մարմինների կողմից տրված սերտիֆիկատները հիմք կհանդիսանան տեղական և միջազգային շուկաներում արտադրանքի մուտքի համար: Պետությունը աստիճանաբար կզարգացնի ժամանակակից լաբորատորիաներ և տեխնիկական հսկողության ու սերտիֆիկացման իրավասու

մարմիններ և կաջակցի դրանց հավատրարմագրմանը և ճանաչմանը Հայաստանում և արտերկրում: Առաջնությունը կտրվի ԽՀԱԱՀ-ի որոշարկված արդյունաբերական ոլորտներում գործող մարմիններին: Բարեփոխման ռազմավարության բոլոր երեք ուղղություններով խնդիր է դրված ձևավորել և զարգացնել որակի ապահովմանը և անվտանգության վերահսկմանն առնչվող կրթության և վերապատրաստման կարողություններ:

4.3.2 Փուլեր, թիրախներ և մոնիտորինգային ցուցանիշներ

ա) 1-ին ուղղություն. Ստանդարտացում, չափագիտություն և հավատարմանգրում.

1-ին ուղղության՝ ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բարեփոխումը բաղկացած է զարգացման երեք փուլերից.

- փուլ 1՝ <<Վերակազմավորում>> (2010-2011թ.թ.),
- փուլ 2՝ <<Ինստիտուցիոնալ և կարողությունների հզորացում>> (2012-2016թ.թ.),
- փուլ 3՝ <<Ձևավորված կարողությունների միջազգային ճանաչում>> (2016-2020թ.թ.):

Այս փուլերը հիմնվում են որակի ենթակառուցվածքի ստեղծման կամ բարեփոխման նպատակով միջամտության ընդհանուր տրամաբանության քայլերի վրա (Գծապատկեր 1): Սույն ռազմավարությունը, մասնավորապես՝ ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտների բարեփոխումը հետամուտ է ոլորտների կատարելագործման նպատակին՝ մինչև որոշակի միջազգային ճանաչում ստանալը: Այն համապատասխանում է միջամտության ընդհանուր տրամաբանությանը՝ մոտավորապես 10 տարում ապահովել որակի ենթակառուցվածքի ընթացքը 1-4 քայլերով: Այս բարեփոխման բարեհաջող իրականացման դեպքում նոր ռազմավարության կարիք կզգացվի, որը նպատակաուղղված կլինի որակի ենթակառուցվածքի լիակատար զարգացմանը և լիարժեք միջազգային ճանաչման հարցերին:

Ուղղություն 1-ի (Ստանդարտացում, չափագիտություն և հավատարմագրում) շրջանակներում, ըստ փուլերի, սահմանվում են հետևյալ առանցքային թիրախները.

- Փուլ 1-ի՝ <<Վերակազմավորման>> շրջանակներում.
    - Որակի ազգային խորհրդի հիմնում՝ ռազմավարության ընդունումից անմիջապես հետո,
    - հորիզոնական օրենսդրության փաթեթի նախագծի ներկայացում ՀՀ Ազգային ժողով 2011 թ-ի վերջին,
    - ինստիտուտների վերակազմավորում (նորերի հիմնում) մինչև 2011թ.-ի հուլիս ամիս,
    - համապատասխանության գնահատման մասով 17000 սերիայի բոլոր ԻՍՕ ստանդարտների ընդունում մինչև 2011թ.-ի վերջ:

Գծապատկեր 1. Որակի ենթակառուցվածքի ռազմավարության տրամաբանությունը



1-ին ուղղության համար առաջարկվող ռազմավարությունը. Ստանդարտացում, չափագիտություն և հավատարմագրում



- միջազգային մարմիններին (ԻԵԿ, ՕՉՄԿ, Չափումների կոնվենցիա, ԼՀՄՀ, ՀՄՖ) անդամակցության նպատակով դիմումների ներկայացում՝ սկսած 2011-ից, ամենաուշը՝ մինչև 2012 թ.-ի վերջ
- Չափագիտության ազգային ինստիտուտին լաբորատորիաների համար նոր տարածքների հատկացում՝ ամենաուշը մինչև 2013 թ.-ի վերջ
- կապերի և գործընկերության հաստատում ստանդարտացման ու հավատարմագրման եվրոպական կազմակերպությունների հետ (ՍԵՆԷԼԵԿ, ՀԵՍԻ և ՀԵՀ)՝ սկսած 2011 թ., ամենաուշը մինչև 2014 թ.-ի վերջ։

- Փուլ 3-ի՝<<Միջազգային ճանաչման>> շրջանակներում.
  - Չափագիտության ոլորտում փոխադարձ ընդունման ու ճանաչման մասին՝ ՕՉՄԿ-ի և ԿՉՄԿ-ի կողմից սահմանված միջազգային պայմանավորվածությունների ստորագրում ամենաուշը՝ մինչև 2016թ.-ը։

Մոնիտորինգային ցուցանիշները

	Ընթացիկ վիճակը 2010թ. (մայիս)	2012թ. Միջանկյալ գնահատման արժեք	2016թ. Միջանկյալ գնահատման արժեք	2020 թ. Վերջնական գնահատման արժեք
Ազգային տնտեսության համապատասխան ոլորտների համար, որպես հայկական ստանդարտ ընդունված ԻՍՕ ստանդարտների	701	առնվազն 30%	առնվազն 70%	մոտ 100%

քանակը *				
Ազգային տնտեսության համապատասխան ոլորտների համար, որպես հայկական ստանդարտ ընդունված ԻԷԿ ստանդարտների քանակը **	309	առնվազն 20%	առնվազն 50%	մոտ 100%
Որպես հայկական ստանդարտ ընդունված եվրոպական ստանդարտների քանակը ***	110	ընդունվել է ԽՀԱԱՀ-ի մասով գերակա ստանդարտ-ների 70%-ը	մոտ 100%	
Որպես հայկական ստանդարտ ընդունված, ներդաշնակեցված եվրոպական ստանդարտների քանակը	-		մոտ 100%	
Ուժը կորցրած, հնացած ստանդարտների քանակը	17,500 ստան-դարտ պետք է չեղյալ համարել	այդ ստանդարտ-ների 50%-ը	Այդ ստանդարտ-ների 100%-ը	
Կատարված ստուգաճշտումների քանակը	0	-	տարեկան առնվազն 20 ստուգա-ճշտում	տարեկան առնվազն 100 ստուգա-ճշտում
Ազգային ստանդարտների այն լաբորատորիաների քանակը, որոնց ստուգաճշտման սերտիֆիկատները ճանաչվում են արտասահմանում (միջազգայնորեն ընդունված հավատարմագրման կամ ԿՉՄԿ ԲՃՀ-ի միջոցով)	0	-	առնվազն 2 լաբորատո-րիա	առնվազն 5 լաբորա-տորիա
Միջազգային ստանդարտների համաձայն հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների քանակը	0	-	առնվազն՝ 50	առնվազն՝ 80

** Համաձայն ԻՍՕ-ի (http://www.iso.org/iso/iso_catalogue.htm)՝ ամեն տարի ընդունվում են ավելի քան 18 000 ԻՍՕ ստանդարտներ և հրապարակվում մոտ 1100 նոր ԻՍՕ ստանդարտներ։*

*** Համաձայն ԻԷԿ-ի (http://www.iec.ch/news_centre/iec_figures/)՝ մինչև 2009թ. վերջը հրապարակված ԻԷԿ ստանդարտների քանակը 5520 է, որոնցից 366-ը հրապարակվել է 2009թ.։*

**** ԽՀԱԱՀ գերակա ոլորտների համար եվրոպական ստանդարտների ցանկը, որը պետք է կազմվի Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից մինչև 2010թ. վերջը։*

1-ին ուղղության՝ ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտների բարեփոխման շրջանակում ձեռնարկվող միջոցառումների գլխավոր դերակատարը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է՝ որպես քաղաքականություն մշակող, ինչպես նաև համապատասխան հաստատությունները՝ Ստանդարտների ազգային ինստիտուտը, Չափագիտության ազգային ինստիտուտը և Հավատարմագրման ազգային մարմինը։

բ) 2-րդ ուղղություն. Տեխնիկական կանոնակարգում և շուկայի վերահսկողություն

Տեխնիկական կանոնակարգում և շուկայի վերահսկողություն ուղղության բարեփոխումը սկսվում է ՀՀ հորիզոնական օրենսդրությունը եվրոպական համընդհանուր օրենսդրությանը մոտարկելով, որին կհաջորդի ոլորտային օրենսդրության աստիճանական համապատասխանեցումը ԵՄ օրենսդրությանը։ Այս ուղղության համար առանձնացվում են հետևյալ 4 փուլերը.

- փուլ 1՝ <<Տեխնիկական կանոնակարգերի ու շուկայի վերահսկողության հորիզոնական օրենսդրության վերանայում>>,
- փուլ 2՝ <<ԽՀԱԱՀ գերակա ոլորտներում՝ ՀՀ ոլորտային օրենսդրության վերանայում>>,

- փուլ 3՝ <<ԵՄ ներդաշնակեցված ոլորտներում ՀՀ ոլորտային օրենսդրության վերանայում, բացառությամբ ԽՀԱԱՀ-ում ընդգրկված ոլորտների>>,
- փուլ 4՝ <<ԵՄ չներդաշնակեցված ոլորտներում ՀՀ ոլորտային օրենսդրության վերանայում>>:

Այս բոլոր փուլերի համար սահմանվում են հետևյալ թիրախները.

- Ազգային օրենսդրությունը ԵՄ համընդհանուր օրենսդրությանը մոտարկելու ազգային ծրագրի մշակում, փուլի սկզբում,
- Շահագրգիռ կողմերի (գործարար համայնք և սպառողներ) մասնակցությամբ մոնիտորինգային խմբերի ստեղծում ՀՀ ԷՆ համակարգմամբ, մինչև փուլի սկիզբը,
- Համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթների ներկայացում ՀՀ ԱԺ, մինչև յուրաքանչյուր փուլի առաջին տարվա ավարտը,
- շուկայի վերահսկողության բնագավառի ընթացակարգերի բարելավում, փուլի սկզբից մեկ տարվա ընթացքում:

Բյուրոկրատական քաշքշուկի (<<կարմիր ժապավեն>>) նվազեցումն օրենսդրությունում ենթադրում է ներդաշնակեցում, պարզեցում, ինչպես նաև՝ հնացած կանոնակարգերի և օրենքների վերացում և նոր վարչական պահանջների ներդրում: Պետք է չեղյալ հայտարարել արտադրանքի նախաշուկայական վերահսկողության կամ սահմանային ստուգման տարբեր ձևերը, բացառությամբ այն ձևերի, որոնք բխում են միջազգանորեն ընդունելի փորձից:

Այս ռազմավարությունը չի սահմանում, սակայն չի բացառում, առկա պետական տեսչությունների (շուկայի վերահսկողության մարմինների) վերակազմավորումը: Պատճառն այն է, որ թիվ 765/2008 (ԵՀ) կանոնակարգը ԵՄ անդամ պետությունների կողմից շուկայի վերահսկողության մասով ընդհանուր խնդիրների վերաբերյալ նվազագույն պահանջներ է սահմանում: Կանոնակարգն, այնուամենայնիվ, չի սահմանում շուկայի վերահսկողություն իրականացնող մարմիններին ներկայացվող կազմակերպական պահանջները: Հետևաբար, եվրոպական մոդելին հետևելիս, Հայաստանը պետք է ներդնի շուկայի վերահսկողության համակարգի աշխատանքի պարբերական վերանայման և գնահատման համակարգ: Եթե գնահատմամբ պարզվի, որ անհրաժեշտ են ինստիտուցիոնալ վերակազմավորում և հզորացում, ապա պետք է իրականացնել անհրաժեշտ վերակազմավորումը:

Մինչև 2011 թվականի վերջ կստեղծվի շուկայի վերահսկողություն իրականացնող մարմինների աշխատանքը համակարգող մշտական մեխանիզմ: Դա պետք է իրականացվի Հայաստանում Տեսչական բարեփոխումների հայեցակարգի համաձայն: Նույն ժամկետում շուկայի վերահսկողություն իրականացնող յուրաքանչյուր մարմին պետք է մշակի և սահմանի մաքսային մարմինների հետ համագործակցություն և տեղեկատվության փոխանակման ընթացակարգեր:

Բարեփոխումների մոնիտորինգի համար սահմանվում են հետևյալ ցուցանիշները.

- վերանայված և փոփոխված օրենքների և տեխնիկական կանոնակարգերի քանակը,
- շուկայի վերահսկողության արշավների քանակը,
- շուկայում հայտնաբերված, պահանջներին չհամապատասխանող արտադրանքի քանակը,
- արտադրողների, նրանց ներկայացուցիչների կամ ներմուծողների կողմից ձեռնարկվող ուղղիչ կամ կանխարգելիչ միջոցառումների քանակը,
- ԵՄ արտահանվող ապրանքախմբերի քանակը:

Վերը նշված բոլոր ցուցանիշները ժամանակի ընթացքում պետք է աճեն:

2-րդ ուղղության՝ Տեխնիկական կանոնակարգման ու շուկայի վերահսկողության բարեփոխման միջոցառումներն իրականացնող հիմնական սուբյեկտներն են.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ որպես համակարգող գերատեսչություն,
- տեխնիկական կանոնակարգեր մշակող նախարարությունները, մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ

առողջապահության նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության նախարարությունը և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը,

- ոչ պարենային արտադրանքի շուկայի վերահսկողության համար պատասխանատու պետական տեսչությունը, ինչպես նաև՝ մաքսային մարմինները։

գ) 3-րդ ուղղություն. Փորձարկում, տեխնիկական հսկողություն և սերտիֆիկացում

3-րդ ուղղության, այն է՝ փորձարկման, տեխնիկական հսկողության և սերտիֆիկացման բարեփոխումն իր բնույթով տարբերվում է մյուս ոլորտներից։ Պատճառն այն է, որ փորձարկման լաբորատորիաների և տեխնիկական հսկողության ու հավատարմագրման մարմինների մեծ մասն աշխատում է մասնավոր հատվածում։ Հետևաբար, Կառավարությունը կստեղծի պայմաններ մասնավոր հատվածի զարգացման համար։ Այս ուղղությամբ առաջին բարեփոխումը կլինի ներկայիս հավատարմագրման համակարգից սահուն անցումը ԻՍՕ ստանդարտներին համապատասխանեցված հավատարմագրմանը, որպեսզի համապատասխանության գնահատման մարմինների աշխատանքը ոչ թե խաթարվի, այլ բարելավվի։
Բացի այդ, Կառավարությունը կիրականացնի մասնավոր ձեռնարկատերերին խրախուսման քաղաքականություն, որպեսզի վերջիններս ներդնեն ԻՍՕ/ԻԷԿ 9001-ի, ԻՍՕ 14001-ի և այլ ստանդարտների համաձայն կառավարման համակարգեր։ Առաջնությունը կտրվի համապատասխանության գնահատման այն մարմիններին ու ընկերություններին, որոնք գործում են ԽՀԱԱՀ-ի գերակա ոլորտներում։ ԽՀԱԱՀ-ի նպատակներից ելնելով՝ համապատասխանության գնահատման պոտենցիալ մարմինները պետք է հավատարմագրվեն արտասահմանյան որևէ ճանաչված մարմնի կողմից, քանի դեռ ՀՀ Հավատարմագրման ազգային մարմինը միջազգային ճանաչում չունի։ Վերջապես, Կառավարությունը կխրախուսի համապատասխանության գնահատման մարմինների ասոցիացիաների ձևավորմանը։ Այս ասոցիացիաներին հնարավորություն կտրվի մասնակցել քաղաքականությունների մշակմանը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման գործընթացներին։
Պետք է հասնել հետևյալ երեք առանցքային թիրախներին.

- կազմել դրամաշնորհային ծրագիր մինչև 2012 թ. վերջը կառավարման միջազգային ստանդարտների և հավատարմագրման ներդրման համար,
- մինչև 2013թ. վերջը ընտրել դրամաշնորհային ծրագրի շահառուների առաջին խումբը,
- մինչև 2016թ. վերջը ընտրել դրամաշնորհային ծրագրի շահառուների երկրորդ խումբը։

Բարեփոխման մոնիտորինգի համար կօգտագործվեն հետևյալ ցուցանիշները.

- ԻՍՕ/ԻԷԿ 9001 ստանդարտի համաձայն սերտիֆիկացված կառավարման համակարգեր ունեցող ընկերությունների քանակ,
- ԻՍՕ 14001 ստանդարտի համաձայն սերտիֆիկացված շրջակա միջավայրի կառավարման համակարգեր ունեցող ընկերությունների քանակ,
- ԻՍՕ 22000 ստանդարտի համաձայն սերտիֆիկացված սննդի անվտանգության կառավարման համակարգեր ունեցող ընկերությունների քանակ,
- ԻՍՕ/ԻԷԿ 27001 ստանդարտի համաձայն սերտիֆիկացված տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգեր ունեցող ընկերությունների քանակ,
- հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների քանակ,
- միջազգայնորեն ճանաչված հավատարմագրում ստացած համապատասխանության գնահատման մարմինների քանակ,
- համապատասխանության գնահատման մարմինների ասոցիացիաների քանակ։

Վերը նշված ցուցանիշների ցանկը կլրացվի ԻՍՕ-ի և ԻԷԿ-ի կողմից նոր ոլորտային կառավարման ստանդարտներ ընդունման դեպքում: Բոլոր ցուցանիշները պետք է ունենան աճման միտում: 3-րդ ուղղության բարեփոխման միջոցառումների իրականացման հիմնական պատասխանատուն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է:

4.3.3 Ժամանակացույց և հենանիշներ

Բարեփոխումը նախատեսվում է իրականացնել մինչև 2020 թվականը: Ստորև ներկայացվում է ըստ տարիների ակնկալվող զարգացումները և առաջընթացը:

- *Մինչև 2011թ..*

Կստեղծվի ռազմավարության իրականացման մոնիտորինգի և համակարգման մեխանիզմ, որը կիրականացվի Որակի ազգային խորհրդի ձևավորման միջոցով:
Բարեփոխման ռազմավարության հաստատումից հետո, կարճ ժամանակ անց, կներկայացվի նոր հորիզոնական օրենսդրության փաթեթը՝ ներկայում գործող <<Ստանդարտացման մասին>> ՀՀ օրենքը, <<Համապատասխանության գնահատման մասին>> ՀՀ օրենքը և <<Չափումների միասնականության ապահովման մասին>> ՀՀ օրենքը փոխարինելու նպատակով: Փաթեթը կներմուծի հետևյալ նոր դրույթները՝ ինչպես կազմակերպել ու իրականացնել ազգային ստանդարտացումը, ինչպես մշակել տեխնիկական կանոնակարգերը, ինչպես կատարել արտադրանքի համապատասխանության գնահատում կանոնակարգվող բնագավառում և վերահսկել այն շուկայի վերահսկողության միջոցով, ինչպես կազմակերպել ու իրականացնել համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումը ԻՍՕ ստանդարտի համաձայն և ինչպես կազմակերպել չափագիտությունը, համեմատության ու տեխնիկական հսկողության միջոցով ապահովել չափումների հետագծելիությունը և կատարել չափման միջոցների համապատասխանության գնահատման ու չափածրարված ապրանքների չափագիտական վերահսկողությունը: Նոր օրենսդրությունը հիմնված կլինի ԱՀԿ ԱՏԽ համաձայնագրի և եվրոպական պահանջների (ԵՀ թիվ 98/34/ դիրեկտիվ, ԵՀ թիվ 765/2008 կանոնակարգ, Եվրախորհրդարանի և Եվրոպական խորհրդի թիվ 768/2008 որոշում, Եվրոպական նոր մոտեցման դիրեկտիվներ, ԵՀ թիվ 2001/95/ դիրեկտիվ, ԵՏՀ թիվ 85/374/ դիրեկտիվ և այլն) վրա, ինչպես նաև միջազգային ստանդարտների և միջազգային կազմակերպությունների առաջարկությունների վրա:

Նոր օրենսդրության կապահովի կանոնակարգերի պարզեցում: Ստանդարտների, չափագիտության և հավատարմագրման ազգային մարմինների գործունեությունը կսահմանափակվի այն ծառայություններով, որոնք սովորաբար մատուցվում են նմանատիպ կազմակերպությունների կողմից: Պետք է երաշխավորվի այս երեք մարմինների լիարժեք համապատասխանությունը միջազգային պահանջներին՝ բացառելով ապագայում հնարավոր թերացումները: Այսպիսով, մի շարք կարգավորող գործառույթներ կվերացվեն՝ թեթևացնելով բիզնեսի բեռը:

2011 թվականի կեսերից կսկսվի ԻՍՕ 17000 սերիայի ստանդարտների վրա հիմնված հավատարմագրման նոր կանոններին անցնելու գործընթացը: Այն կտևի մինչև ներկայումս տրված հավատարմագրման վկայագրերի ժամկետի ավարտը՝ սերտիֆիկացման ու փորձարկման աշխատանքների խափանումներից խուսափելու համար:

Հավատարմագրման մասով համապատասխանության գնահատման թեկնածու մարմինների աշխատակիցներին ներկայում ներկայացվող Ստանդարտների ազգային ինստիտուտում վերապատրաստում անցնելու պահանջը կվերացվի: Փոխարենը, համապատասխանության գնահատման մարմիններին հնարավորություն կտրվի մրցութային հիմունքներով ընտրել ուսուցում իրականացնող:

- *Մինչև 2012 թ.*

Ներկայիս Ստանդարտների ազգային ինստիտուտը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության Չափագիտության ազգային ինստիտուտը և Հավատարմագրման գործակալությունը կվերակազմավորվեն, կհաստատվի նոր կառուցվածք, մրցութային կարգով կընտրվի նոր ղեկավարություն, և մինչև 2011 թվականի տարեվերջ նոր մարմինները կսկսեն գործել իրենց նոր կառուցվածքով՝ իրականացնելով իրենց նոր գործառույթները: Կադրերի ընտրությունը կիրականացվի հեղինակավոր խորհրդատվական ընկերությունների և միջազգային փորձագետների մասնակցությամբ ձևավորված ընտրական հանձնաժողովի կողմից:

Անդամակցության դիմումներ կներկայացվեն միջազգային մարմիններին (ԻԷԿ, ՕՉՄԿ, Չափումների կոնվենցիա, ԼՀՄՀ, ՀՄՖ) և կընդլայնվի եվրոպական մարմինների հետ գործընկերությունը։
Շուկայի և սպառողի շահերի պաշտպանության պետական տեսչությունը նույնպես կվերակառուցվի տեսչական բարեփոխումների ներքո, առաջընթաց կապրի և իր ընթացակարգերում կներմուծի շուկայի վերահսկողության մասով ԵՄ հիմնական պահանջները։ Այս ոլորտի օրենսդրության մոտարկմանը զուգահեռ՝ մինչև 2018թ կշարունակվի կարողությունների հզորացումը՝ ԵՄ գործելակերպին լիովին համահունչ գործելու նպատակով։

- *Մինչև 2013 թ.*

Կավարտվի ՀՀ օրենսդրության վերանայումը ԽՀԱԱՀ գերակա արդյունաբերական ոլորտներում։ Վերանայումը երկու նպատակ կունենա՝ նվազեցնել բյուրոկրատական քաշքշուկը և հնարավոր դարձնել մոտարկումը եվրոպական օրենսդրությանը։ Օրենսդրության պարզեցման երկրորդ և հաջորդող փուլերը մասնավորապես ուղղված կլինեն չափազանց շատ սերտիֆիկատների, արտոնագրերի և գրանցումների նվազեցմանը։ Անհրաժեշտության դեպքում կմշակվեն փոփոխություններ՝ համապատասխան օրենքներում և կանոնակարգերում, և դրանք կներկայացվեն ընդունման։ Կընդունվեն նաև եվրոպական ստանդարտները ԽՀԱԱՀ գերակա արդյունաբերական ոլորտներում։ Մաքսային մարմինը կստանձնի ԽՀԱԱՀ-ում ներառված արտադրանքի ծագման սերտիֆիկատների տրամադրման պատասխանատվությունը։

- *Մինչև 2015 թ.*

Խորհրդային ժամանակներից մնացած հնացած ստանդարտները կկորցնեն իրենց ուժը, իսկ միջազգային ու եվրոպական ստանդարտների ընդունման գործընթացը կշարունակվի։
Միջազգային մարմիններին անդամակցելու դիմումները ամենայն հավանականությամբ կարժանանա դրական եզրակացության, և Հայաստանի որակի ենթակառուցվածքը լիարժեքորեն կկապվի միջազգային համակարգին։ Առաջիկա տարիներին անդամակցությունն առանցքային կլինի՝ սերտիֆիկացման, չափագիտության և հավատարմագրման զարգացումը միջազգային ուղու վրա դնելու համար։ Բացի այդ, Հայաստանի ստանդարտացումն ու հավատարմագրումը կդառնան եվրոպական ստանդարտների ու հավատարմագրման կազմակերպությունների աշխատանքների մաս։
Ելնելով ԽՀԱԱՀ-ի շուրջ բանակցություններից՝ կառավարությունը կաջակցի ԽՀԱԱՀ ոլորտներում գործող համապատասխանության գնահատման մարմինների զարգացմանը՝ դրանց նյութական բազան բարելավելու, միջազգային ու եվրոպական ստանդարտներ կիրառելու և միջազգային ճանաչում ունեցող հավատարմագրման մարմիններից հավատարմագրում ստանալու նպատակով։

- *Մինչև 2016 թ.*

Չափագիտության ազգային ինստիտուտի լաբորատորիան կստանա հավատարմագրում իրենց կողմից մատուցվող ստուգաճշտման ծառայությունների մասով։ Այս նպատակը պայմանավորված է մինչև 2013 թվականը Չափագիտության ազգային ինստիտուտին համապատասխան տարածք և ժամանակակից սարքավորումներ հատկացնելու խնդիրների բարեհաջող լուծմամբ։ Միջազգային ճանաչման փուլը կարող է սկսվել միայն այն դեպքում, եթե չափագիտությունը բավականաչափ հզորանա՝ հիմնական պահանջները բավարարելու համար։

Կավարտվի ազգային ոլորտային օրենսդրության վերանայումը ԵՄ ԽՀԱԱՀ ներդաշնակեցված ոլորտներից բացի՝ այլ համաձայնեցված ոլորտների մասով, և վարչական բեռի նոր թեթևացում կկատարվի։

- *Մինչև 2018 թ.*

Կավարտվի ԵՄ ոչ ներդաշնակեցված ոլորտներին համապատասխան ազգային ոլորտային օրենսդրության վերանայումը և կիրականացվի վարչական բեռի չորրորդ ու վերջնական թեթևացումը։
Ստանդարտների ազգային ինստիտուտը աստիճանաբար կանցնի միջազգային ու եվրոպական ստանդարտների ընդունմանը և կկարողանա այդ գործընթացը իրականացնել ընդունելի կարգով։

Հավատարմագրման մարմինը պետք է նպատակադրվի հավատարմագրման վկայագրերի միջազգային ճանաչմանը հասնելուն, ինչը չափազանց կարևոր է առևտրի տեսանկյունից, մասնավորապես՝ լաբորատորիաների և արտադրանքը սերտիֆիկացնող մարմինների համար։ Դա

հնարավոր է ՀԵՀ հավատարմագրման բազմակողմ պայմանավորվածության հիման վրա, որը և առաջարկվում է։

- *Մինչև 2020 թ.*

Հավատարմագրման ծառայությունները լիովին կճանաչվեն, և չափագիտական սերտիֆիկատների առաջին ճանաչումը ևս իրականություն կդառնա։ Համապատասխանության գնահատման մարմինները, այդ թվում՝ ԽՀԱԱՀ ոլորտներում գործող մարմինները, կարող են արտասահմանյան հավատարմագրերը փոխարինել ազգայինով։ Բարեփոխումը կավարտվի, որակի ենթակառուցվածքը լիովին կահամապատասխանի միջազգային և ԵՄ պահանջներին՝ ի վիճակի լինելով մատուցել էական և բարձորակ ծառայություններ սպառողներին։

4.3.4 Ռիսկեր, ենթադրություններ և հաջողության գործոններ

Առաջարկվող ռազմավարությունը հիմվնում է հետևյալ ենթադրությունների վրա.

- ՀՀ կառավարությունը կշարունակի քաղաքական աջակցություն տրամադրել ռազմավարության իրականացման ողջ գործընթացի ընթացքում,
- ՀՀ կառավարությունը կմոբիլիզացնի անհրաժեշտ ռեսուրսներ, ներառյալ դոնորների աջակցությունը,
- բազմազան և միջազգային ճանաչում ունեցող որակի ենթակառույցների ծառայությունների նկատմամբ տնտեսվարող սուբյեկտների պահանջարկը գնալով կաճի։

Բարեփոխման գործում Որակի ազգային խորհրդի և շահագրգիր կողմերի ներգրավումը կօգնի նվազագույնի հասցնել ռիսկերը։
Ռազմավարության հաջողությունը կախված կլինի հետևյալ գործոններից.

- որակի ենթակառուցվածքի շրջանակներում քաղաքական ազդեցության և պոտենցիալ շահերի բախման բացառում,
- բարեփոխված հաստատությունների անկախություն և կայունություն (դրանք պետք է ունենան սեփական գործառնական ծախսերը հոգալու և որակյալ աշխատակիցներ ներգրավելու հնարավորություն և կարողություններ),
- համապատասխան գիտելիքների, հմտությունների ուսուցման և վերպատրաստման ներքին համակարգի կարողությունների առկայություն,
- որակի ազգային ենթակառուցվածքի ծառայություններից սպառողների օգտվելու պատրաստակամություն,
- բարեփոխմանը ոչ-կառավարական և մասնավոր հատվածների կողմից աջակցություն։

4.4 Որակի ենթակառուցվածքի նոր ինստիտուցիոնալ կառուցվածքը

4.4.1 Ինստիտուցիոնալ բարեփոխման հաջորդականությունը

Հայաստանյան որակի ենթակառուցվածքի նոր ինստիտուցիոնալ կառուցվածքը կկայանա քայլ առ քայլ՝ երեք ու կես տարվա ընթացքում (Գծապատկեր 3) ։
Բարեփոխումը կսկսվի 2010 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքին վերակազմակերպումից, որի նպատակն է հզորացնել վերջինիս՝ քաղաքականություն մշակողի և համակարգողի ունակություններն ու կարողությունները։ Կձևավորվի Որակի ազգային խորհրդը և կսահմանվի դրա իրավասությունների շրջանակը՝ որպես բարեփոխման հարցերով վերադաս խորհրդատվական մարմին։ Կսկսվեն նաև ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման ոլորտների բարեփոխման նախապատրաստական աշխատանքները։

Գծապատկեր 3



2011 թվականին Ստանդարտների ազգային մարմինը, Չափագիտության ազգային ինստիտուտը և հավատարմագրման մարմինը բարեփոխվելու են և ձեռք են բերելու նոր իրավական կարգավիճակ ու կառավարման կառուցվածք, ինչով դրանց գործառույթները կհամապատասխանեցվեն միջազգային պահանջներին: Տեխնիկական կանոնակարգեր մշակող նախարարությունների համակարգում կիրականացվի կարիքների և բացերի գնահատում:

2012 թվականին վերակազմակերպումը կընդգրկի ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ քաղաքաշինության նախարարության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կառույցները: Ըստ անհրաժեշտության, կփոփոխվեն պոտենցիալ հենակետային լաբորատորիաների շահագործման իրավական կարգավիճակը և կանոնները՝ դրանք վերափոխելով պետական ոչ-առևտրային կազմակերպության: Այս լաբորատորիաների գործունեությունը կախված չի լինի առևտրային գործունեությունից ստացված եկամուտներից: Անհրաժեշտության դեպքում կարդիականացվի շուկայի վերահսկողության մարմինների կառուցվածքը և կբարելավվեն կապերը մաքսային մարմինների հետ:

Վերակազմակերպման հաջորդ և վերջին տարում նույն գործընթացում կընդգրկվեն տեխնիկական կանոնկարգեր մշակող նախարարությունները, մասնավորապես՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

4.4.2 Որակի ենթակառուցվածքի հիմնական հատվածի կազմակերպումը

Բարեփոխումը կնպատակաուղղվի առանցքային սուբյեկտների՝ քաղաքականություն մշակողների և համակարգողների, ստանդարտների ազգային մարմնի, չափագիտության ազգային ինստիտուտի, հավատարմագրման գործակալության կազմակերպմանը, ինչը պատկերված է Գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4



Լավագույն դեպքում այս վերակազմակերպումը կիրականանա 2011 թվականին: Գործնականում, ցանկալի կազմակերպում ունենալու համար պետք է բավարարել որոշ նախապայմաններ: Այդ նախապայմաններն են՝

- պետական բյուջեից ֆինանսավորումը պետք է բավարար լինի բարեփոխված համակարգը ֆինանսապես կայուն դարձնելու համար,
- Չափագիտության ազգային ինստիտուտը պետք է լինի ձևավորված և գործուն:

Պայմանավորված օբյեկտիվ պատճառներով՝ այս նախապայմանները կարող են չկատարվել 2011թ. ընթացքում: Հետևաբար առաջարկվում է անցումային մոտեցում (Գծապատկեր 5):

Գծապատկեր 5



Քանի որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության բյուջեն կարող է զգալիորեն չավելանալ, և ելնելով համակարգի ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակից՝ ներկայիս Ստանդարտների

ազգային ինստիտուտի արտադրանքի փորձարկման և սերտիֆիկացման աշխատանքները ժամանակավորապես կպահպանվեն ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգում: Այս երկու աշխատանքները կփոխանցվեն մի նոր մարմնի, որը կստեղծվի որպես պետական փակ բաժնետիրական ընկերություն և կգործի ներկայիս Ստանդարտների ազգային ինստիտուտից անկախ: Նոր Ստանդարտների ազգային ինստիտուտը կֆինանսավորվի գործող համակարգում փորձարկումից և սերտիֆիկացումից առաջացած եկամուտներից: Քանի որ նման կառուցվածքը, ակնհայտորեն, շահերի բախում կառաջացնի նախարարության համակարգի ներսում, ապա դրա կառավարումը կփոխանցվի որևէ անկախ սուբյեկտի՝ կոնցեսիայի իրավունքով: Հենց որ բարեփոխված Ստանդարտների ազգային ինստիտուտը հասնի ֆինանսական կայունության, այն կմասնավորեցվի: Սեփականաշնորհումից ստացված հասույթը կօգտագործվի նույն նպատակով:

Ֆինանսական կայունություն նշանակում է, որ ստանդարտների ինստիտուտը կարող է կայուն կերպով գործել օրենսդրությամբ սահմանված աշխատանքների համար պետական բյուջեից տրվող ֆինասավորման, անդամավճարների, ստանդարտների վաճառքի, դասընթացների ու մատուցված ստանդարտացման ծառայություններից ստացված եկամուտների հաշվին:

Նոր Ստանդարտների ազգային ինստիտուտի ֆինանսական գործունեությունը պետք է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից վերահսկվի տարեկան կտրվածքով:

Բարեփոխված հիմնական հաստատությունների վարչական կարողությունը նույնպես կարող է փոփոխվել: Հիմնական աշխատանքներում ներգրավված մասնագիտական աշխատակիցների քանակը կփոփոխվի հետևյալ կերպ.

Աշխատակազմի քանակի փոփոխությունը

Գործառույթ/ հաստատություն	2010 (ընթացիկ)	2011	2012	2014	2015	2017	2018	2019	2020
Քաղաքականության մշակում և համակարգում/ ՀՀ ԷՆ	4	7	7	7	7	7	7	7	7
Ստանդարտացում/ ՍԱԻ	20	25	25	25	25	25	25	25	25
Սերտիֆիկացում/ արտադրանքի և համակարգերի համապատասխանության գնահատման մարմին	50	20*							
Փորձարկում /արտադրանքի և համակարգերի համապատասխանության գնահատման մարմին	17	17*							
Ազգային ստանդարտներ և ստուգաճշտում/ ԱԳԼ և ՉԱԻ	-	16	16	20	20	25	25	30	30
Չափման միջոցների համապատասխանության գնահատման մարմին	144	50*							
Հավատարմագրում/ ՀԱՄ	7	5	5	5	6	6	6	7	7
Շուկայի վերահսկողություն/ ՇՍՇՊ պետական տեսչություն	41**								

** քանի դեռ գործում է*

*** անձնակազմի հարցերը կքննարկվեն տեսչական բարեփոխումների շրջանակում*

4.4.3 ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործառույթները որպես քաղաքականություն մշակող և համակարգող

Ստանդարտների և տեխնիկական կանոնակարգերի ոլորտներում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պետք է զարգացնի հետևյալ կարողությունները.

- տեխնիկական կանոնակարգերի և ազգային ստանդարտացման մասով պետական քաղաքականության մշակում,
- տեխնիկական կանոնակարգեր մշակող նախարարությունների աշխատանքի համակարգում,
- տեխնիկական կանոնակարգման և ստանդարտների բնագավառներում նախարարությունների և մասնագիտացված մարմինների կարիքների համար ուղեցույցերի մշակում,
- նախարարության իրավասության ներքո տեխնիկական կանոնակարգերի մշակում, այդ թվում՝ ազդեցության գնահատումների իրականացում,
- այն ստանդարտների ցանկի հրատարակում, որոնք նախատեսում են արդյունաբերական արտադրանքի համապատասխանությունը օրենսդրությանը,
- Կառավարության անունից համագործակցություն Ստանդարտների ազգային ինստիտուտի հետ և պետական բյուջեից տրամադրվող համապատասխան ֆինանսավորման ապահովում,
- միջազգային, եվրոպական և ազգային ստանդարտների ընդունման հայտերի մշակում և դրանց շուրջ բանակցություններ Ստանդարտների ազգային ինստիտուտի հետ,
- տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների ոլորտներում այլ երկրների հետ համագործակցության ապահովում:

Շուկայի վերահսկողության մասով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պետք է.

- ստեղծի հաղորդակցության և համակարգման մեխանիզմներ շուկայի վերահսկողության մարմինների, մաքսային մարմնի և նախարարությունների միջև,
- ապահովի շուկայի վերահսկողության համապատասխան ընթացակարգերի ստեղծումը,
- երաշխավորի, որ շուկայի վերահսկողության մարմիններին տրվեն լիազորություններ, միջոցներ և գիտելիքներ,
- ապահովի շուկայի վերահսկողության ծրագրերի առկայությունը,
- վերանայի և գնահատի շուկայի վերահսկողության միջոցառումների իրականացումը,
- իրականացնի շուկայի վերահսկողության բնագավառում համագործակցություն այլ երկրների հետ:

Չափագիտության և հավատարմագրման բնագավառների մասով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պետք է.

- մշակի պետական քաղաքականություն չափագիտության ոլորտում,
- վերահսկի Չափագիտության ազգային ինստիտուտի աշխատանքը և ապահովի պետական բյուջեից համապատասխան ֆինանսավորում,
- մշակի չափման միջոցների համար տեխնիկական կանոնակարգեր և հաստատի օրենսդրական չափագիտական վերահսկողության ենթակա չափման միջոցների ստուգաչափման պարբերականությունը,
- համագործակցի հավատարմագրման ազգային մարմնի հետ, ապահովի վերջինիս պետական բյուջեից համապատասխան ֆինանսավորում, ինչպես նաև իրականացնի կատարողականի պարբերական մոնիտորինգ,

- խրախուսի հավատարմագրումը պարտադիր համապատասխանության գնահատման ոլորտներում,
- նշանակի կարգավորվող ոլորտներում գործող համապատասխանության գնահատման մարմիններ, հավատարմագրման ազգային մարմին ներկայացնի հայտեր համապատասխանության գնահատման մարմինների տեխնիկական իրավազորության նախնական և պարբերական գնահատման նպատակով,
- հրապարակի և թարմացնի նշանակված համապատասխանության գնահատման մարմինների ցանկը,
- իրականացնի կանոնակարգող համագործակցություն այլ երկրների հետ՝ չափագիտության, հավատարմագրման և համապատասխանության գնահատման ոլորտներում:

Փորձարկման, տեխնիկական հսկողության և սերտիֆիկացման մասով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պետք է.

- իրականացնի համապատասխանության գնահատման մարմինների զարգացման և գործունեության մոնիտորինգ,
- խրախուսի որակի ապահովման կիրառումը կանոնակարգվող և ոչ կանոնակարգվող ոլորտներում,
- իրականացնի իրազեկման բարցրացման և այլ աշխատանքներ, որոնք նպաստում են որակի ստանդարտների ներդրմանը, հատկապես կարևորելով փոքր և միջին կազմակերպություններին ուղղված գործունեությունը,
- համագործակցի ոչ-կառավարական և մասնավոր հատվածների հետ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պետք է աջակցի տեխնիկական կանոնակարգերի և շուկայի վերահսկողության հարցերով երկու մշտական գործող միջգերատեսչական աշխատանքային խմբերի աշխատանքներին: Այն նաև պետք է պարբերաբար տեղեկատվություն ներկայացնի Որակի ազգային խորհուրդ և աջակցի դրա աշխատանքներին:

4.4.4 Բարեփոխված ստանդարտների ազգային մարմնի բնութագիրը և գործունեության համառոտ նկարագիրը

Ստանդարտների ազգային ինստիտուտը կհանդիսանա որպես երկրի ստանդարտների ազգային մարմին: Այն կշարունակի իրականացնել իր աշխատանքները ազգային ստանդարտացման ոլորտում և կներկայացնի երկիրը միջազգային կառույցներում: Մարմնի կազմավորումը համապատասխանեցվելու է ստանդարտների միջազգային և եվրոպական կազմակերպությունների առաջարկություններին:

Ստանդարտացման գործընթացը կիրականացվի միջազգային ստանդարտների և առաջարկությունների համաձայն և ստանդարտացման հարցերով շահագրգիռ կողմերի պարտադիր մասնակությամբ: Ստանդարտացման մասին նոր օրենքի հիման վրա կորոշվի և կհիմնադրվի Ստանդարտների ազգային ինստիտուտը՝ որպես ասոցիացիա: Նոր և հատուկ իրավակազմակերպչական կարգավիճակը հնարավորություն կտա շահգրգիռ կողմերին (կառավարություն, իրավաբանական և ֆիզիկական անձիք) անդամակցել այդ կազմակերպությանը և ներկայացված լինել դրա կառավարման բարձրագույն մարմնում՝ Գլխավոր ասամբլեայում: Այդ մարմնի կազմակերպական կառուցվածքը պետք է առնվազն ներառի հետևյալ ստորաբաժինները.

Գծապատկեր 6



Ստանդարտացման մարմնի ֆինանսավորման աղբյուրները կլինեն հետևյալը.

- պետական բյուջե՝ ստանդարտացման մասին օրենքով նախատեսված գործունեության տեսակների համար տրամադրվող ուղղակի բյուջետային աջակցություն,
- անդամության վճարներ,
- ծրագրերից եկող եկամուտներ/Հայաստանի ստանդարտների մշակման պայմանագրեր, այդ թվում՝ միջազգային և եվրոպական ստանդարտները՝ որպես ազգային ստանդարտներ ընդունելը,
- ստանդարտների և ստանդարտացման փաստաթղթերի վաճառքից ստացվող եկամուտներ,
- Հայաստանի օրենքներով և ԻՍՕ-ի էթիկայի կանոններով թույլատրվող գործունեության այլ տեսակներից ստացվող եկամուտներ։

Գլխավոր ասամբլեան կարող է որոշում կայացնել Հայաստանի ստանդարտների հետ համապատասխանության գնահատման կամավոր սերտիֆիկացման սխեմա ստեղծելու մասին։ Այս միջոցառումը կարող է բերել հավելյալ եկամուտ, որը կստացվի սերտիֆիկացման մարմիններին տրված սերտիֆիկացման համապատասխան նշանն օգտագործելու թույլտվությունից։

Ստանդարտացման մարմինը պետք է մշակի բիզնես պլան և իրականացնի անդամակցության վճարների և ստանդարտների գների սահմանման համապատասխան քաղաքականություն։ Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, մեկնարկային ժամանակահատվածում ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետք է լինի պետական բյուջեն։ Աջակցությունը պետական բյուջեից ժամանակի ընթացքում կնվազի մինչև ստանդարտների մարմինը հասնի միջազգային գործունեության համար պահանջվող ծախսերին համարժեք կայուն մակարդակի։

Տեխնիկական կանոնակարգեր մշակող նախարարությունների միջոցով՝ կառավարությունը կշարունակի հանդիսանալ ստանդարտացման մարմնի ծառայությունների հիմնական սպառողը։ Նախարարությունները պետք է պայմանագրեր կնքեն ստանդարտացման մարմնի հետ և վճարեն հայկական ստանդարտների մշակման և միջազգային և եվրոպական ստանդարտների՝ որպես ազգային ստանդարտներ, ընդունման համար։

Ստանդարտացման մարմինը պետք է փորձի պահպանել Ստանդարտների ազգային ինստիտուտի գործող ուսումնական կենտրոնները և ընդլայնել դրա ծառայությունները:

4.4.5 Բարեփոխված չափագիտության ազգային ինստիտուտի բնութագիրը և գործունեության համառոտ նկարագիրը

ՉԱԻ-ը կգործի Չափումների կոնվենցիայով ստեղծված ինստիտուտների, ինչպես նաև՝ ԿՈՈՄԵՏ և ԵՎՐՈՄԵՏ կազմակերպությունների նման տարածաշրջանային կազմակերպությունների առաջարկություններին համապատասխան: Մասնավորապես, պետք է հետևել ԵՎՐՈՄԵՏ-ի <<ԵՎՐՈՄԵՏ և չափագիտության ազգային ինստիտուտի գործունեությունը>> թիվ 10 ուղեցույցին: Ուղեցույցի համաձայն՝ ինստիտուտի հիմնական աշխատանքը պետք է լինի ազգային էտալոնների ստեղծումը և պահպանումը, Միավորների համակարգին միջազգայնորեն ճանաչված հետագծելիության ապահովումը, ազգային կարիքների համար ազգային էտալոնների կայունության պահպանումը և չափագիտության փորձ և գիտելիք տրամադրելը ազգային օգտագործողներին ստուգաճշտման ծառայությունների, վերապատրաստման և խորհրդատվության միջոցով:
Չափագիտության ազգային ինստիտուտի կանոնադրությամբ կերաշխավորվի ՉԱԻ-ի ինքնավարությունը՝ ֆինանսական և գործառնական հարցերում: Այն խորհրդատվություն կստանա չափագիտության ոլորտի շահագրգիռ կողմերից կազմված Չափագիտության խորհրդի կողմից: ՉԱԻ-ը չափագիտության մասին օրենքով լիազորվում է նշանակել ազգային հենակետային լաբորատորիաներ՝ որպես չափագիտության ազգային համակարգում առաջնային չափումներ իրականացնողներ:
Չափագիտության ազգային ինստիտուտի ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են.

- պետական բյուջեն,
- ծառայություններից ստացված եկամուտներ /ստուգաճշտում, խորհրդատվություն, վերապատրաստում և այլն/
- դրամաշնորհներ և ծրագրեր:

Չափագիտության ազգային ինստիտուտը կունենա կառավարման հետևյալ կառուցվածքը.

Գծապատկեր 7



4.4.6 Բարեփոխված հավատարմագրման ազգային մարմնի բնութագիրը և գործունեության համառոտ նկարագիրը

ՀՀ կառավարությունը կհիմնադրի նոր պետական ոչ առևտրային կազմակերպություն, որի լիազոր մարմինը կհանդիսանա ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը: Այս կազմակերպությունը կհանդիսանա երկրի հավատարմագրման ազգային մարմինը: Այն կներկայացնի երկիրը հավատրամագրման միջազգային համագործակցությունում: Կազմակերպությունը կստեղծվի համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17011

ստանդարտի պահանջների: Այն կունենա կառավարման հետևյալ կառուցվածքը. **Գծապատկեր8**



Հավատարմագրման մասին նոր օրենքը կսահմանի Հավատարմագրման ազգային մարմնում որոշումների կայացման անկախության մեխանիզմներ: Պետք է առավելագույնս երաշխավորվի Հավատարմագրման ազգային մարմնի անկախությունը նաև իր հիմնադրից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից:

Հավատարմագրման ազգային մարմնի ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են.

- պետական բյուջեն
- ծառայություններից ստացվող եկամուտները
- դրամաշնորհները և ծրագրերը:

Հավատարմագրման ազգային մարմինը պետք է մշակի բիզնես պլան և իրականացնի հավատարմագրման վճարների սահմանման համապատասխան քաղաքականություն: 2010թ իրականացվելիք շուկայի ուսումնասիրությունը կօգնի սահուն անցում կատարել դեպի վճարովի հավատարմագրման ծառայությունների մատուցմանը: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, մեկնարկային փուլում ֆինանսավորման հիմնական աղբյուրը կլինի պետական բյուջեն:

4.5 Ժամանակավոր լուծումներ առաջիկայում միջազգայնորեն ճանաչված ծառայությունների կարիքն ունեցողների համար

Հայաստանի որակի ենթակառուցվածքի արդիականացումը երկարատև գործընթաց է: Հետևաբար, տնտեսվարող սուբյեկտները և այլ հաճախորդները, որոնք մոտ ապագայում որակի ենթակառուցվածքի միջազգայնորեն ճանաչված ծառայությունների կարիք կունենան, պետք է այդ ծառայությունները ստանան արտերկրից:

Անհրաժեշտ է բարելավել որակի խնդիրների մասին իրազեկվածությունը տնտեսվարող սուբյեկտների և այլ սպառողների շրջանակներում: Նրանք պետք է կարողանան ճիշտ դատել, թե որ ծառայություններն են վստահելի և որ փորձարկման եզրակացությունները և սերտիֆիկատները կարող են ճանաչվել երկրի ներսում և արտասահմանում: Հիմնական կանոնը, որին պետք է հետևել, այն է, որ համապատասխանության գնահատման մարմնի (փորձարկման լաբորատորիայի, վերահսկողության մարմնի կամ սերտիֆիկացման մարմնի) կամ ստուգաճշտման լաբորատորիայի եզրակացությունները և սերտիֆիկատները արժանահավատորեն կընդունվեն այն դեպքում, եթե տվյալ մարմինը կամ

լաբորատորիան հավատարմագրված է ծառայության համապատասխան ոլորտի մասով հավատարմագրման մարմինների փոխադարձ ճանաչման համաձայնագրերի կողմ հանդիսացող հավատարմագրման ազգային մարմնի կողմից՝ համապատասխան միջազգային ստանդարտի համաձայն:

Հայաստանի համապատասխանության գնահատման մարմինները, որոնք անմիջապես հետամուտ կլինեն իրենց ծառայությունների միջազգային ճանաչմանը, նույնպես պետք է ձգտեն միջազգային հավատարմագրման՝ նմանատիպ հավատարմագրման մարմնի կողմից: Քանի որ առաջիկայում հավատարմագրման ազգային մարմնի և չափագիտության ազգային ինստիտուտի ծառայությունները կարող են միջազգայնորեն ճանաչված չլինել, ապա այս մարմինները չպետք է ապակողմնորոշեն իրենց հաճախորդներին և ազնվորեն տեղեկացնեն իրենց ծառայությունների իրական օգտակարության մասին:

4.6 Բարեփոխման համար կանխատեսվող ծախսերը և միջազգային դոնորներից ակնկալվող տեխնիկական աջակցությունը

Մեծ ներդրումների կարիք կա չափագիտության ոլորտում: Ըստ միջազգային փորձագետների գնահատումների, չափագիտության ազգային ինստիտուտը ժամանակակից լաբորատոր հարմարությունների կարիք ունեն: Այդ պայմանները պետք է ստեղծել բարեփոխված Չափագիտության ազգային ինտիտուտի տարածքում: Նոր շենք հիմնելու պարագայում ներդրումների չափը կարող է հասնել մինչև 1.4-1.9 մլրդ դրամ կամ 3-4 մլն եվրոյի: Չափագիտության բոլոր գործառույթների իրականացման համար օգտագործվող սարքավորումները, որոշ բացառություններով, պետք է փոխարինել նորերով: Սարքավորումների ձեռքբերման համար կատարվող ներդրումը պետք է մանրակրկտորեն պլանավորել՝ պատշաճորեն հաշվի առնելով առկա կարիքները:

Զգալի ներդրումների կարիք ունեն փորձարկման լաբորատորիաները: Որոշ բացառություններով դրանց հարմարությունները և սարքավորումները գտնվում են նույնքան վատ պայմաններում, ինչպես չափագիտության դեպքում է: Ներդրումների մասով որոշումները պետք է հիմնված լինեն հետագա վերլուծությունների և առաջնահերթությունների որոշման վրա: Հենակետային լաբորատորիաների լիարժեք բարելավումը կարժենա մոտավորապես նույնքան, որքան Չափագիտության ազգային ինստիտուտի համար նախատեսված գումարն է:

Ստանդարտացման, հավատարմագրման և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության մարմնի համար պետք են SS սարքավորումներ, տեղեկատվական համակարգեր և տվյալների հենքեր: Այս ներդրումների ընդհանուր գումարը գնահատվում է մոտավորապես 1 մլն եվրո:

Պետական բյուջեով պետք է ապահովել անդամակցության վճարները և փորձագետների մասնակցությունը միջազգային և եվրոպական կազմակերպություններում, մասնավորապես՝ ԻԷԿ, ԼՀՄՀ, ՀՄՖ, ՕՉՄԿ, Չափումների կոնվենցիա, ՍԵՆԷԼԵԿ և ՀԵՀ: Գումարի չափը կախված կլինի հայաստանյան մարմինների կողմից ընտրվող անդամակցության տեսակից:

Որակի ապահովման քաղաքականության առաջխաղացումը մասնավոր հատվածում պետք է իրականացնել հավատարմագրման և որակի կառավարման դրամաշնորհային ծրագրով, որ կազմում է 0.9-1.4 մլրդ դրամ կամ 2-3 մլն. եվրո:

Տեխնիկական աջակցության մասով գնահատված կարիքների պատկերը հետևյալն է.

Ոլորտ	Օրենս-դրական մոտար-կում	Ինստիտուցիոնալ հզորացում	Կարո-ղություն-ների հզորա-ցում	Իրազե-կման բարձ-րացում	Ներդրումներ		
					Հարմա-ր ություն-ներ	Սարքա-վորում	SS
Ստանդարտացում	Այո	Այո	Այո	Այո	Ոչ	Ոչ	Այո
Չափագիտություն	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո	Այո
Հավատարմագրում	Այո	Այո	Այո	Այո	Ոչ	Ոչ	Այո
Տեխնիկական կանոնակարգեր	Այո	Ոչ	Այո	Այո	Ոչ	Ոչ	Ոչ

Շուկայի վերահսկողություն	Այո	Այո	Այո	Այո	Ոչ	Ոչ	Այո
Փորձարկում, տեխնիկական հսկողություն, սերտիֆիկացում	Ոչ	Ոչ	Այո	Այո	Այո	Այո	Այո

Որակի ենթակառուցվածքի բոլոր բնագավառներում առկա է գիտելիքների փոխանցման և իրազեկման բարձրացման անհրաժեշտություն բարեփոխման իրականացման ողջ ընթացքում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ինչպես և ներգրավված ինստիտուտները գնահատում են որակի ենթակառուցվածքի բարեփոխման նախապատրաստման և նախագծման համար տրամադրված աջակցությունը: Հարկավոր է արտաքին աջակցությունը նպատակաուղղել թիրախային ինստիտուտների կարողությունների հզորացման նախագծերի:

4.7 Կապը Հայաստանում ընթացող տեսչական բարեփոխման հետ

Որակի ենթակառուցվածքի բարեփոխումը ենթադրում է ոչ պարենային ապրանքների շուկայի վերահսկողություն: Այդ իսկ պատճառով բարեփոխման միջոցառումները պետք է համաձայնեցվեն 2009թ. ապրիլին սկսված տեսչական բարեփոխման հետ: Քանի որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ստանձնել է այս երկու բարեփոխումները համակարգողի դերը, ապա նպաստավոր միջավայր է ստեղծվել բարեփոխման համապատասխան միջոցառումները ուղղորդելու և ներդաշնակորեն փոխհամալրելու համար:

Տեսչական բարեփոխման նպատակը Հայաստանում պետական վերահսկողության գործընթացի արդյունավետության բարձրացումն է, մինչդեռ սույն ռազմավարության նպատակը ոչ պարենային ապրանքների վերահսկողությունը եվրոպական կանոնների ու պահանջների հետ համապատասխանեցնելն է:

Սույն բարեփոխման ռազմավարությամբ նախատեսվող շուկայի վերահսկողության ԵՄ մոդելի ներդրումը կծառայի տեսչական բարեփոխման նպատակներին:

Քանի որ ԵՄ հետ ԽՀԱԱՀ գործընթացը կխթանի Հայաստանում բարեփոխումները նաև այլ ոլորտներում, ապա պետք է հետևել փոխհամալրման նմանատիպ մոտեցմանը՝ այդ ոլորտներում որակի հարցերին վերաբերող խնդիրներ ծագելու դեպքում:

Բարեփոխումների կառավարում, մոնիտորինգ և գնահատում

Որակի ենթակառուցվածքի բարեփոխումը կղեկավարվի ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից: Կպահանջվեն երեք նոր աշխատակիցներ, որոնցից յուրաքանչյուրը կվերահսկի բարեփոխման մեկ ուղղությունը:

Որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարության իրականացումը պետք է հիմնավորվի մանրամասն գործողությունների ծրագրերով: Նախընտրելի կլինի, եթե յուրաքանչյուր գործողությունների ծրագիր ընդգրկի երկամյա ժամանակահատված: Մոնիտորինգի նպատակով պետք է ներկայացնել պարբերական՝ եռամսյակային հաշվետվություններ, ինչպես նաև՝ վերջնական հաշվետվություն:

Մոնիտորինգային արդյունքները կներկայացվեն Որակի ազգային խորհրդի նիստերի ընթացքում: Խորհրդի անդամությունը պետք է լինի այնպիսին, որ բոլոր շահագրգիռ կողմերը՝պետական մարմիններ, որակի ենթակառուցվածքի ինստիտուտներ, գործարարներ, սպառողներ, գիտության և հետազոտությունների ոլորտ, հավասարակշիռ ներկայացված լինեն: Որակի ազգային խորհրդի նիստերն անհրաժեշտ է անցկացնել եռամսյակային կամ առնվազն՝կիսամյակային կտրվածքով:

Որակի ազգային խորհուրդը կկատարի հետևյալ աշխատանքները.

- որակի հարցերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում կառավարությանը,
- որակին վերաբերող ազգային ուղեցույցերի և ծրագրերի ձևակերպում և ներկայացում կառավարությանը,

- որակի ենթակառուցվածքի արդյունավետ գործունեությունն ապահովող միջոցառումների առաջարկում կառավարությանը,
- երկրում որակի քաղաքականության լիարժեք որդեգրման և Հայաստանի որակի ենթակառուցվածքի միջազգային ինտեգրման խրախուսում,
- երկխոսության, ինչպես նաև հետադարձ կապի ապահովում պետության և շահագրգիռ կողմերի միջև,
- որակի ենթակառուցվածքի արդիականացման գործընթացի և այս բարեփոխման իրականացման միառժամանակյա ընթացքի ապահովում,
- որակի ենթակառուցվածքի բարեփոխման գործողությունների ծրագրերի և հաշվետվությունների քննարկում և հաստատում։

Առաջարկվում է բարեփոխման ընթացքի անկախ գնահատում կատարել 2012թ., 2016թ. և 2020թ. սկզբում։ Գնահատման արդյունքները պետք է արձանագրվեն և ներկայացվեն նաև Որակի ազգային խորհրդին։

4. Եզրակացություն

Սույն ռազմավարությունը երկար տարիների մտորումների արդյունք է և դրսևորում է միջազգային լավագույն գործելակերպը ընդունելու և նախկին համակարգն անցյալում թողնելու ՀՀ կառավարության պատրաստակամությունը:

Ռազմավարությունը վերաբերում է ազգային կարողությունների հզորացմանը և Հայաստանի որակի ենթակառուցվածքի ինտեգրմանը միջազգային համակարգին: Թեև չի ակնկալվում արագ պտուղներ, սակայն ռազմավարության հետևողական իրականացումը կապահովի երկրի տնտեսական զարգացման և միջազգային ինտեգրման անհարժեշտ հիմքերը:

Ռազմավարության շահառուները բազմաթիվ և գործունեության առումով բազմաբնույթ սուբյեկտներ են: Ընդ որում, նախատեսվում է, որ որակի ենթակառուցվածքի սուբյեկտները և շահագրգիռ կողմերը ևս կմասնակցեն և կստանձնեն բարեփոխումներն իրականացնողի դերը:

Առաջարկվող բարեփոխումը կառաջնորդի Հայաստանի որակի ենթակառուցվածքը դեպի զարգացման էապես ավելի բարձր մակարդակ: Առանց բարեփոխված որակի ենթակառուցվածքի մեր երկիրը չի կարող բարգավաճել: Ուստի ՀՀ կառավարությունը պարտավորվում է աջակցել երկրում որակի ենթակառուցվածքի բարեփոխումներին: Սույն բարեփոխումների առաջընթացը օբյեկտիվ նախապայմաններ են նաև ԽՀԱԱՀ-ի շուրջ ԵՄ հետ բանակցությունների մեկնարկի և դրա արդյունավետ իրականացման համար:

Կա միայն մեկ ուղի, որով ստանդարտացումը, չափագիտությունը, հավատարմագրումը, փորձարկումը, տեխնիկական հսկողությունը, սերտիֆիկացումը, տեխնիկական կանոնակարգերը և շուկայի վերահսկողությունը պետք է առաջ շարժվեն, և այդ ուղին հստակորեն տանում է դեպի միջազգային և եվրոպական ստանդարտներ ու գործելակերպեր:

ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ



X Գծապատկեր 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_1693

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 16-ի N 1693- Ն որոշման

Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարության ներդնման գործողությունների ծրագիր (2010-2020 թթ.)

NN ը/կ	Գործողություն	Նպատակ և համառոտ նկարագրություն	Նախապայման	Ակնկալվող արդյունք	Վերջնա-ժամկետ	Պատասխանատու հաստատություն
1	2	3	4	5	6	7
1.	ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈՏԱՐԿՈՒՄ					
1.1	Տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման և շուկայի վերահսկողության մասին օրենքի մշակում	Պետք է մշակել նոր օրենք. ա) տեխնիկական կանոնակարգման գործառույթը ստանդարտացումից առանձնացնելու, բ) տեխնիկական կանոնակարգումը կարգավորված ոլորտում համապատասխանության գնահատման և շուկայի վերահսկողության հետ կապելու նպատակով: Այս օրենքը պետք է համահունչ լինի (ԵՀ) թիվ 768/2008 որոշման և (ԵՀ) թիվ 765/2008 կանոնակարգի հետ: Այն կփոխարինի համապատասխանության գնահատման ներկայիս օրենքը: Շուկայի վերահսկողության պահանջները նաև կարող են արտացոլվել Շուկայի վերահսկողության մասին առանձին օրենքում:		Օրենքի նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 6 ամսվա ընթացքում	ԷՆ, ԱՏԻՍ ԱԻՍ

1	2	3	4	5	6	7
1.2	Արդյունաբերական ապրանքների տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների օրենսդրական մոտարկման համար արդյունաբերական առաջնային ոլորտների ընտրությունIdentification	Ընտրված արդյունաբերական ապրանքների համար տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների օրենսդրական մոտարկում		Առաջնային արդյունաբերական ոլորտների ցանկ	գործողությունների ծրագրի ընդունումից 3 ամսվա ընթացքում	ԽՀԱԱՀ միջգերատեսչական հանձնաժողով, ԷՆ, ԱՏԽ ԱԽ
1.3	Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման մասին օրենքի մշակում	Մշակել նոր օրենք միջազգային ուղենիշներին, ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտին և (ԵՀ) թիվ 765/2008 կանոնակարգին համապատասխան և ապահովել հավատարմագրման մարմնի անկախությունը	-	Օրենքի նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 6 ամսվա ընթացքում	ԷՆ, ԱՏԽ ԱԽ
1.4	Ստանդարտացման մասին օրենքի մշակում	Ստանդարտացման մասին ներկայիս օրենքը փոխարինել նոր օրենքով, ըստ որի ստանդարտացման գործընթացը և կառավարումը պետք է լինեն անկախ, որը ստանդարտացման հիմնական շահագրգիռ կողմերի հավասարակշռված ներկայացուցչության հնարավորություն է տալիս և, որը կազմակերպված է միջազգային պահանջներին համապատասխան	-	Օրենքի նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 6 ամսվա ընթացքում	ԷՆ, ԱՏԽ ԱԽ
1.5	Չափագիտության մասին օրենքի մշակում	Չափումների միասնականության ապահովման մասին ներկայիս օրենքը փոխարինել նոր օրենքով, որով ա) ստեղծվում է չափագիտության նոր ենթակառուցվածք, բ) հստակորեն նկարագրվում և տարանջատվում են գործողությունները գիտական, արդյունաբերական և օրենսդրական	-	Օրենքի նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 6 ամսվա ընթացքում	ԷՆ, ԱՏԽ ԱԽ

1	2	3	4	5	6	7
		չափագիտության բնագավառներում, գ) տեսակի հաստատումը և չափման գործիքների ստուգաչափումը դարձվում են համահունչ ՕՉՄԿ-ի առաջարկություններին և դ) չափածրարված արտադրանքի չափագիտական հսկողության պահանջները համապատասխան են Եվրոպական դիրեկտիվներին				
1.6	Առկա տեխնիկական կանոնակարգերի վերանայման պլանավորում	Առկա տեխնիկական կանոնակարգերը, որոնք ընդունվել են Ստանդարտացման մասին ներկայիս օրենքի, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հուլիսի 29-ի թիվ 1149-Ն որոշման հիման վրա, պետք է վերանայել, ենթարկել վերլուծության, պետք է որոշարկել գործող կանոնակարգերի փոխարինման կամ լրամշակման կամ նոր կանոնակարգերի մշակման անհրաժեշտությունը, պետք է պլանավորել նոր իրավաբանական տեքստի մշակումը, պետք է ընտրել տեխնիկական կանոնակարգերը ԽՀԱԱՀ-ի գերակա ոլորտներում և մասնանշել ԵՄ մոտարկման համար:	Կախված է 2.2.4 գործողությունից	Վերանայման հաշվետվություն Տեխնիկական կանոնակարգերի վերանայման կառավարական ծրագիր	գործողությունների ծրագրի ընդունումից 10 ամսվա ընթացքում գործողությունների ծրագրի ընդունումից 12 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ , ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, Բնապահպանության նախարարություն, Առողջապահության նախարարություն, Քաղաքաշինության

1	2	3	4	5	6	7
						նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Արտակարգ իրավիճակների նախարարության, ԱՏԽ ԱԽ, ՍԲՍ ԱԽ
1.7	ԵՄ համընդհանուր օրենսդրությանը ազգային օրենսդրության մոտարկման ազգային ծրագրի արդիականացում	ԵՄ համընդհանուր օրենսդրությանը ազգային օրենսդրության մոտարկման ազգային ծրագիրը պետք է արդիականացնել այնպես, որ ԽՀԱԱՀ գերակա ոլորտներում տեխնիկական կանոնակարգերի մոտարկումն ավարտվի 2013թ.		Արդիականացված ԵՄ համընդհանուր օրենսդրությանը ազգային օրենսդրության մոտարկման ազգային ծրագիր	գործողությունների ծրագրի ընդունումից 13 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ , ԱՏԽ ԱԽ, ՍԲՍ ԱԽ
1.8	Համապատասխանության գնահատման և Ստանդարտացման մասին ներկայիս օրենքների հիման վրա Էկոնոմիկայի նախարարի հրամանների վերանայում	Ներկայիս երկու օրենքները Էկոնոմիկայի նախարարին իրավունք են տալիս սահմանել ստանդարտացման և համապատասխանության գնահատման ոլորտներում կատարման ենթակա պահանջներ և ընթացակարգեր։ Պետք է վերացնել միջազգային ստանդարտներին և փորձերին հակասող անգործածելի պահանջները։		Վերանայման հաշվետվություններ Հրամանների նախագծեր	գործողությունների ծրագրի ընդունումից 12 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ

1	2	3	4	5	6	7
1.9	Պարտադիր սերտիֆիկացման ենթակա արտադրանքի ցանկի թարմացում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հուլիսի 29-ի թիվ 1149-Ն որոշումը պետք է լրամշակել 1.5-րդ կետի գործողությամբ նախատեսված վերլուծության արդյունքների համաձայն:		Կառավարության որոշման նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 15 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ , ԱՏԽ ԱԽ, ՍԲՍ ԱԽ
1.10	Մշակել չափագիտության մասին օրենքի ենթաօրենսդրական ակտ հայերեն լեզվով անվանումների, միավորների և չափման սանդղակների անվանումների ու պայմանանիշերով ներկայացման, ինչպես նաև դրանց կիրառման կանոնների վերաբերյալ	Պետք է մշակել Միավորների համակարգի ու ՕՉՄԿ-ի առաջարկություններին և 80/181/EEC դիրեկտիվին համապատասխանեցված տեխնիկական կանոնակարգ:	Չափագիտության մասին նոր օրենքի ընդունում	Իրավական ակտերի նախագծեր	գործողությունների ծրագրի ընդունումից 12 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ
1.11	Մշակել էտալոնների մասին չափագիտության մասին օրենքի ենթաօրենսդրական ակտ	Պետք է մշակել ՕՉՄԿ-ի առաջարկություններին համապատասխանեցված տեխնիկական կանոնակարգեր էտալոնների համար	Չափագիտության մասին նոր օրենքի ընդունում	Իրավական ակտերի նախագծեր	գործողությունների ծրագրի ընդունումից 12 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ
1.12	Մշակել չափագիտության մասին օրենքի ենթաօրենսդրական ակտ օրենսդրական հսկողության տակ գտնվող չափման միջոցների համար	Պետք է մշակել ՕՉՄԿ-ի առաջարկություններին համապատասխանեցված տեխնիկական կանոնակարգեր օրենսդրական հսկողության տակ գտնվող չափման միջոցների համար	Չափագիտության մասին նոր օրենքի ընդունում	Իրավական ակտերի նախագծեր	գործողությունների ծրագրի ընդունումից 12 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ
1.13	Մշակել չափագիտության մասին օրենքի ենթաօրենսդրական ակտ՝ չափածրարված ապրանքների համար	Պետք է մշակել չափածրարման մասով եվրոպական դիրեկտիվների հետ համապատասխանեցված չափածրարված արտադրանքների և չափման տարրաների /շշերի/ համար	Չափագիտության մասին նոր օրենքի ընդունում	Իրավական ակտերի նախագծեր	գործողությունների ծրագրի ընդունումից 12 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ , ԱՏԽ ԱԽ

1	2	3	4	5	6	7
		տեխնիկական կանոնակարգեր				
1.14	Մշակել Սպառողների շահերի պաշտպանության մասին օրենքի փոփոխությունները	Փոփոխությունները պետք է մշակել, որպեսզի ներմուծվի դիրեկտիվ 2001/95/EC-ի ապրանքների ընդհանուր անվտանգության պահանջները		Օրենքում փոփոխությունների նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 18 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ , ԱՏԽ ԱԽ
1.15	Օրենսդրական առաջարկի մշակում 85/374/EEC դիրեկտիվի դրույթները հայկական օրենսդրության մեջ ներառելու համար	Թերություն ունեցող ապրանքների համար արտադրողների պատասխանատվության մասին 85/374/EEC դիրեկտիվի դրույթները պետք է ներառվեն ազգային օրենսդրության մեջ՝ ԽՀԱԱՀ-ի նպատակներից ելնելով		Օրենսդրական առաջարկի նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 24 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ , ԱՏԽ ԱԽ
2.	ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԶՈՐԱՑՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ					
2.1	Ընդհանուր					
2.1.1	Որակի խորհրդի ստեղծման համար փաստաթղթերի մշակում	Հայաստանի որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությունը նախատեսում է, որ Որակի խորհուրդն է ուղղորդելու և կողմնորոշելու բարեփոխումը, ինչպես նաև՝ երկրի որակի քաղաքականությունը։ Այս գործառույթները պետք է տրվեն խորհրդին։		Կառավարության որոշման նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 1 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ
2.1.2	ԷՆ-ում ստեղծել փորձագետների մի թիմ՝ որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարության իրականացումը վերահսկելու նպատակով	Հայաստանի որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությամբ պահանջվում է, որ բարեփոխումը պետք է կառավարեն ԷՆ նշանակված վարչության երեք աշխատակիցներ։ Ավելին, ռազմավարությունը նախատեսում է, որ որակի ենթակառուցվածքով և տեխնիկական կանոնակարգերով զբաղվող բաժինը		Որակի ենթակառուցվածքով և տեխնիկական կանոնակարգերով զբաղվող բաժնում աշխատանքի են ընդունվել	գործողությունների ծրագրի ընդունումից 1 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ

1	2	3	4	5	6	7
		երեքով կավելացնի իր աշխատակիցների քանակը: Հետևաբար, անհրաժեշտ է աշխատանքի ընդունել համապատասխան որակավորմամբ երեք նոր քաղաքացիական ծառայողների		ևս երեք աշխատակիցներ		
2.1.3	Կենտրոնացնել որակի ենթակառուցվածքով և տեխնիկական կանոնակարգերով զբաղվող ԷՆ-ի ներքին կառույցները	ԷՆ-ում ստեղծել որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգերի համար պատասխանատու մեկ ստորաբաժանում: Այս ստորաբաժանումը և որակի ենթակառուցվածքի հաստատությունները դնել մեկ փոխնախարարի ղեկավարության տակ		Կառավարության որոշման նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 3 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ
2.1.4	Ստեղծել մշտական աշխատանքային խումբ՝ տեխնիկական կանոնակարգերի հարցերը քննարկելու նպատակով	Աշխատանքային խումբը կառաջնորդվի ԷՆ-ի կողմից և կազմված կլինի ԷՆ-ի, Գյուղատնտեսության նախարարության, Տրանսպորտի և կապի նախարարության, Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, Բնապահպանության նախարարության, Առողջապահության նախարարության, Քաղաքաշինության նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակիցներից		Կառավարության որոշման նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 3 ամսվա ընթացքում	ՀՀ ԷՆ
2.1.5	Վերլուծել տեխնիկական կանոնակարգեր մշակող նախարարությունների վարչական կառույցները,	Ինչպես պահանջվում է Հայաստանի որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությամբ, պետք է կատարել կարիքների և բացերի		Վերլուծությունների հաշվետվություն	Գյուղատնտեսության նախարարության,	ՀՀ ԷՆ, ՀՀ գյուղատնտեսության նախարարությու

1	2	3	4	5	6	7
	բացառությամբ՝ Էկոնոմիկայի նախարարության	վերլուծություն։ Վերլուծությամբ կտրվեն ուղղություններ վարչական կառույցի և կարողությունների վերջնական օպտիմալացման համար			Առողջապահության նախարարության, Քաղաքաշինության նախարարության, Արտակարգ իրավիճակների նախարարության համար գործողությունների ծրագրի ընդունումից 15 ամսվա ընթացքում Տրանսպորտի և կապի նախարարության, Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, Բնապահպանության նախարարության և Աշխատանքի և սոցիալական	ն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության , ԱՏԽ ԱԽ

1	2	3	4	5	6	7
					հարցերի նախարարության համար գործողությունների ծրագրի ընդունումից 24 ամսվա ընթացքում	
2.1.6	Դասընթացների անցկացում այն պաշտոնյաների համար, որոնք ներգրավվելու են ԽՀԱԱՀ-ի շուրջ բանակցությունների ԱՏԽ մասով քննարկումներում	Դասընթացների անցկացումը ԽՀԱԱՀ-ի շուրջ բանակցությունների ԱՏԽ մասով քննարկումներում ներգրավված պաշտոնյաների համար սկսվել է 2010թ. մայիսին: Դասընթացները պետք է շարունակվեն կանոնավոր հիմունքներով: Ուսուցման կարիքները պետք է որոշարկվեն ԷՆ-ի կողմից՝ ԵՄ ԽԽ-ի աջակցությամբ		Ուսուցողական միջոցառումներ (եռամսյակը առնվազն մեկ դասընթաց)	Եռամսյակը մեկ	ԷՆ
2.1.7	Ներկայացնել մտադրությունների մասին նամակներ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ստանդարտացման, հավատարմագրման և չափագիտության Թվինինգ ծրագրերի համար	Ինստիտուցիոնալ աջակցությունը և կարողությունների հզորացումն առանցքային օժանդակություն կլինի բարեփոխված հաստատությունների համար:		Մտադրությունների մասին նամակներ	2011թ. մարտ	ԷՆ, Ստանդարտների ազգային ինստիտուտ, Չափագիտության ազգային ինստիտուտ, Հավատարմագրման մարմին
2.1.8	Նախապատրաստել Թվինինգ ծրագրերի փաստաթղթերը ստանդարտացման, հավատարմագրման և չափագիտության համար	Մշակել Թվինինգ ծրագրերի նկարագիրը	Կախված է մտադրությունների մասին նամակների ընդունումից (գործողություն 2.1.9)	Թվինինգ ծրագրերի նկարագիրը	2011թ. դեկտեմբեր	ԷՆ, Ստանդարտների ազգային ինստիտուտ, Չափագիտության ազգային ինստիտուտ,

1	2	3	4	5	6	7
						Հավատարմագրման մարմին
2.1.9	Թվինինգ ծրագրի փաստաթղթաբանության ավարտը շուկայի վերահսկողության մասով և ԵՄ գործընկեր մարմնի ընտրությունը	Թվինինգ ծրագիրը սկսել մինչև 2011թ. վերջ	Կախված է ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ ԵՄ որոշումից		2011թ. դեկտեմբեր	ԷՆ, ՇՍՇՊ ՊՏ
2.2	Ստանդարտացում					
2.2.1	Ծրագրի մշակում որպես Հայաստանի ստանդարտներ՝ 17000 սերիայի համապատասխանության գնահատման ԻՍՕ ստանդարտների ընդունման համար	Հայաստանի որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարության համաձայն, այս ստանդարտների ընդունումը պետք է ավարտվի մինչև 2011թ. վերջը: Այս ծրագիրը ստանդարտացման ծրագրի մաս է կազմելու		Ստանդարտացման ծրագիր Կառավարության որոշման նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 3 ամսվա ընթացքում	ԷՆ, Ստանդարտների ազգային ինստիտուտ
2.2.2	Ստանդարտների ազգային ինստիտուտի ակտիվների և մարդկային ռեսուրսների գույքագրում	Ստանդարտացման և սերտիֆիկացման գործունեության համար գույքագրումը պետք է կատարել առանձին- առանձին՝ ելնելով սերտիֆիկացման և ստանդարտացման գործունեության առանձնացումից		Ակտիվների ցանկ	գործողությունների ծրագրի ընդունումից 2 ամսվա ընթացքում	ԷՆ, Ստանդարտների ազգային ինստիտուտ
2.2.3	Իրականացնել շուկայի հետազոտություն՝ բարեփոխված ստանդարտացման մարմնի ֆինանսավորման առանձնահատկությունները որոշելու նպատակով	Հայաստանի որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությամբ նախատեսվում է, որ բարեփոխված ստանդարտացման մարմնի ֆինանսավորման հիմնական աղբյուրը կմնա պետական բյուջեն: Սակայն, ստանդարտացման ֆինանսավորման մոդելը կփոխվի և նոր մարմնին անհրաժեշտ կլինի մշակել պատշաճ բիզնես պլան: Այս հետազոտություն		Հետազոտություն հաշվետվություն	գործողությունների ծրագրի ընդունումից 6 ամսվա ընթացքում	ԷՆ, Ստանդարտների ազգային ինստիտուտ

1	2	3	4	5	6	7
		միջոցով պետք է տեղեկատվություն հավաքել ստանդարտացման շուկայի կարիքների մասին:				
2.2.4	Մշակել ԽՀԱԱՀ ընտրված ոլորտներում եվրոպական ստանդարտները՝ որպես Հայաստանի ստանդարտներ ընդունելու ծրագիր և չեղյալ համարել հակասող ազգային ստանդարտները	ԽՀԱԱՀ-ի ոլորտներն ընտրելուց հետո պետք է որոշարկել եվրոպական ստանդարտները, և պլանավորել դրանց ընդունումը: Եվրոպական ստանդարտներին հակասող Հայաստանի ստանդարտները պետք է համապատասխանաբար հանել շրջանառությունից: Ծրագրով կարող է նախատեսվել նաև որոշ միջազգային ստանդարտների ընդունում: Ծրագիրը պետք է երաշխավորի, որ մինչև 2013թ. ԽՀԱԱՀ-ի գերակա ոլորտներում եվրոպական ստանդարտները կընդունվեն որպես Հայաստանի ստանդարտներ	Կախված է 1.6-րդ գործողությունից	Եվրոպական ստանդարտների ընդունման ծրագիր	գործողությունների ծրագրի ընդունումից 10 ամսվա ընթացքում	Ստանդարտների ազգային ինստիտուտ, ԱՏԽ ԱԽ, ԷՆ, ԳՆ, ՏԿՆ, ԷԲՊՆ, ԲՊՆ, ՔՆ, ԱՍՀՆ, ԱԻՆ
2.2.5	Փաստաթղթերի պատրաստում՝ որպես ասոցիացիա Ստանդարտների ազգային ինստիտուտի վերահաստատման համար	Ասոցիացիայի գրանցման փաստաթղթերը, ինչպես նաև՝ ենթաօրենսդրական ակտերը պետք է մշակել Ստանդարտացման մասին օրենքի համաձայն		Կանոնադրության նախագիծ Շահագրգիռ կողմերի հրավեր	գործողությունների ծրագրի ընդունումից 10 ամսվա ընթացքում	ԷՆ, Ստանդարտների ազգային ինստիտուտ
2.2.6	Իրազեկման հանդիպումների անցկացում ստանդարտացման շահագրգիռ կողմերի համար՝ բարեփոխված ստանդարտացման մարմնում անդամակցության ձեռքբերման առավելությունները բացատրելու նպատակով	Ներկայիս Ստանդարտների ազգային ինստիտուտը կբարեփոխվի՝ դառնալով ասոցիացիա, որի անդամ կարող են դառնալ ստանդարտացման շահագրգիռ կողմերը: Այս անդամակցության միջոցով ստեղծված հնարավորությունների մասին պետք է տեղեկացնել շահագրգիռ կողմերին:		Երկու իրազեկման հանդիպումներ	2011թ. մայիս 2011թ. հուլիս	ԷՆ, Ստանդարտների ազգային ինստիտուտ
2.2.7	Ստանդարտացման մարմնի	Պետք է ստեղծել ստանդարտների նոր	Կախված է	Ստանդարտնե	գործողությունն	ԷՆ

1	2	3	4	5	6	7
	վերահաստատումը (Ստանդարտների ազգային ինստիտուտ)	մարմնի գլխավոր ասամբլեան և կառավարման մարմինը, և ընդունել կանոնադրությունը։ Կառավարման խորհուրդը պետք է նշանակի ժամանակավոր տնօրեն։	ստանդարտացման մասին նոր օրենքի ընդունումից	ի ազգային ինստիտուտի գլխավոր ասամբլեայի և կառավարման մարմնի որոշումները	երի ծրագրի ընդունումից 12 ամսվա ընթացքում	
2.2.8	Նոր Ստանդարտների ազգային ինստիտուտի գրանցում	Պետական գրանցում՝ համաձայն Ստանդարտացման մասին օրենքի	Կախված է 2.2.7-րդ գործողությունից	Պետական գրանցում	գործողությունների ծրագրի ընդունումից 13 ամսվա ընթացքում	ԷՆ , Ստանդարտների ազգային ինստիտուտ
2.2.9	Նոր Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենի նշանակում	Հիմնված է բաց մրցույթի արդյունքների վրա	Կախված է 2.2.7-րդ գործողությունից	Ստանդարտների ազգային ինստիտուտի կառավարման խորհրդի որոշումը	գործողությունների ծրագրի ընդունումից 13 ամսվա ընթացքում	Ստանդարտների ազգային ինստիտուտի կառավարման խորհուրդ
2.2.10	Վերահաստատել Ստանդարտների ազգային ինստիտուտի Ստանդարտացման տեխնիկական կոմիտեները և արդիականացնել ստանդարտացման ծրագիրը	Պետք է վերահաստատել Ստանդարտների ազգային ինստիտուտի Ստանդարտացման տեխնիկական կոմիտեները, ստանդարտացման ծրագիրը պետք է արդիականացնել և հաստատել նոր ղեկավարության կողմից։	Կախված է 2.2.7-րդ գործողությունից	Ստանդարտների ազգային ինստիտուտի ղեկավարության կողմից ընդունված ստանդարտացման արդիականացված ծրագիրը	գործողությունների ծրագրի ընդունումից 15 ամսվա ընթացքում	Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն և կառավարման խորհուրդ
2.2.11	Ստանդարտների ազգային ինստիտուտի անդամակցության վերագրանցում միջազգային և եվրոպական	Անդամակցություն ԻՍՕ-ում և ՍԵՆ-ում	Կախված է 2.2.7-րդ գործողությունից		գործողությունների ծրագրի ընդունումից 15 ամսվա ընթացքում	Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն և կառավարման

1	2	3	4	5	6	7
	կազմակերպություններում					խորհուրդ
2.2.12	ԻԷԿ-ին անդամակցելու դիմումի ներկայացում	Ինչպես նախատեսված է որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությունում	Կախված է 2.2.7-րդ գործողությունից	Կառավարության որոշման նախագիծ Դիմում	գործողությունների ծրագրի ընդունումից 15 ամսվա ընթացքում գործողությունների ծրագրի ընդունումից 17 ամսվա ընթացքում	ԷՆ Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն և կառավարման խորհուրդ
2.2.13	Ստանդարտների ազգային ինստիտուտի ներքին ընթացակարգերի մշակման պլանավորում	Ստանդարտների ազգային ինստիտուտի՝ ստանդարտացման աշխատանքները ղեկավարելու ընթացակարգերը պետք է մշակել ստանդարտացման մասին նոր օրենքին, ինչպես նաև միջազգային և եվրոպական փորձին համապատասխան:	Կախված է 2.2.7-րդ գործողությունից	Ստանդարտացման նոր ընթացակարգերի մշակման պլան	գործողությունների ծրագրի ընդունումից 18 ամսվա ընթացքում	Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն և կառավարման խորհուրդ
2.2.14	Ստանդարտների ազգային ինստիտուտի Բիզնես պլանի մշակում	Բիզնես պլանը պետք է կազմել շուկայի հետազոտություն արդյունքների հիման վրա	Կախված է 2.2.3-րդ և 2.2.7-րդ գործողություններից	Բիզնես պլան	գործողությունների ծրագրի ընդունումից 24 ամսվա ընթացքում	Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրեն և կառավարման խորհուրդ
2.3	Հավատարմագրում					
2.3.1	Մշակել բարեփոխված Հավատարմագրման ազգային մարմնի կազմակերպական կառուցվածքը և անձնակազմի հաստիքի նկարագրությունները	Սահմանել և բաշխել հավատարմագրման մասնակիցների իրավունքները, պարտականությունները և գործառույթները:		Կազմակերպական կառուցվածքի նախագիծը Հաստիքի	գործողությունների ծրագրի ընդունումից 2 ամսվա ընթացքում	ԷՆ, Հավատարմագրման գործակալություն

1	2	3	4	5	6	7
				նկարագրությունների նախագիծը		
2.3.2	Որոշել նոր հավատարմագրման մարմնի տարածքի տեղը։	Հնարավոր է անհրաժեշտ լինի, որ նոր հավատարմագրման մարմինն առանձնացվի Էկոնոմիկայի նախարարությունից		Որոշարկված նոր տարածք	գործողությունների ծրագրի ընդունումից 3 ամսվա ընթացքում	ԷՆ
2.3.3	Մշակել Հավատարմագրման ազգային մարմնի կանոնադրությունը՝ որպես հիմնադրամ	ՀՀ-ում Հավատարմագրման ազգային մարմնի ձևավորումը		Պետական ոչ-առևտրային կազմակերպության կանոնադրության նախագիծը	գործողությունների ծրագրի ընդունումից 3 ամսվա ընթացքում	ԷՆ
2.3.4	Հիմնադրամի ստեղծման որոշման նախագծում, որը հանդես է գալու որպես հավատարմագրման մարմին	Կառավարությունը պետք է լինի նման հիմնադրամի հիմնադիրը և աջակցի ԷՆ-ին		Կառավարության որոշման նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 3 ամսվա ընթացքում	ԷՆ
2.3.5	Իրականացնել շուկայի հետազոտություն՝ հավատարմագրման վճարների սահմանները որոշելու նպատակով	Հայաստանի որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությամբ նախատեսվում է, որ պետք է վճարներ գանձվեն հավատարմագրման մարմնի կողմից մատուցված ծառայության համար։ Անհրաժեշտ է իմանալ, թե արդյոք համապատասխանության գնահատման մարմինները պատրաստ են իրենց վրա վերցնել հավատարմագրման իրական ծախսերը, թե հավատարմագրման վճարները պետք է աստիճանաբար բարձրանան բեռը նվազեցնելու նպատակով		Հետազոտություն հաշվետվություն	գործողությունների ծրագրի ընդունումից 6 ամսվա ընթացքում	ԷՆ, Հավատարմագրման ազգային մարմին

1	2	3	4	5	6	7
2.3.6	Ստեղծել և գրանցել հավատարմագրման ազգային նոր մարմինը, հիմնել վստահված մարմին, որը գործելու է որպես հավատարմագրման խորհուրդ, ժամանակավոր ղեկավարի նշանակում	Հետևել Հիմնադրամի մասին օրենքի ընթացակարգին: Խնդիրները և հավատարմագրման խորհրդի կազմը պետք է համապատասխանեն հիմնադրամների մասին օրենքին, ԻՍՕ/ԻԷԿ 17011-ին և հավատարմագրման նոր օրենքին	կախված է 2.3.4 կետի որոշման հաստատումից	Հավատարմագրման ազգային մարմինը ստեղծվել է	գործողությունների ծրագրի ընդունումից 5 ամսվա ընթացքում	ԷՆ
2.3.7	Ստեղծել բողոքարկման խորհուրդ	Այդ մարմինների աշխատանքները և կազմը պետք է համապատասխանի ԻՍՕ/ԻԷԿ 17011-ին և հավատարմագրման մասին նոր օրենքին	Կախված է 2.3.6-րդ գործողությունից	Երկու խորհուրդներն էլ ստեղծվել են	գործողությունների ծրագրի ընդունումից 7 ամսվա ընթացքում	Հավատարմագրման ազգային մարմնի վստահված անձինք
2.3.8	Նշանակել Ազգային հավատարմագրման նոր մարմնի գործադիր տնօրենին	Հիմնված է Հավատարմագրման խորհրդի կողմից կազմակերպված և իրականացված մրցույթի արդյունքների հիման վրա	Կախված է 2.3.6-րդ գործողությունից	Մրցույթը հայտարարվել է	գործողությունների ծրագրի ընդունումից 8 ամսվա ընթացքում	Հավատարմագրման ազգային մարմնի վստահված անձինք
2.3.9	Ստեղծել հավատարմագրման տեխնիկական կոմիտեներ	Այդ կոմիտեների աշխատանքները և կազմը պետք է համապատասխանի ԻՍՕ/ԻԷԿ 17011-ի և հավատարմագրման մասին նոր օրենքին	Կախված է 2.3.6-րդ գործողությունից	Լաբորատորիաների և սերտիֆիկացման մարմինների տեխնիկական կոմիտեները ստեղծվել են	գործողությունների ծրագրի ընդունումից 10 ամսվա ընթացքում	Հավատարմագրման ազգային մարմին
2.3.10	Հավատարմագրման մարմնի համար կառավարման համակարգի ներդրման ծրագրի մշակում	Կազմակերպել կառավարման համակարգի ներդրման գործողությունները համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17011-ի		ԿՀ-ի ներդրման ծրագիր	գործողությունների ծրագրի ընդունումից 10 ամսվա ընթացքում	Հավատարմագրման ազգային մարմին
2.3.11	Գնահատողների և	Պետք է համապատասխանի ԻՍՕ/ԻԷԿ		Ներքին	գործողությունն	Հավատարմագր

1	2	3	4	5	6	7
	փորձագետների ընտրության համար ներկայացվող պահանջների մշակում	17011-ի և միջազգային կազմակերպությունների ուղեցույցներին		փաստաթղթի նախագիծ	երի ծրագրի ընդունումից 12 ամսվա ընթացքում	ման ազգային մարմին
2.3.12	Սկսել գնահատողների և փորձագետների խմբի ձևավորումը և վերապատրաստումը	Միջազգային ստանդարտների մասով ուսուցումը պետք է կիրառվի հավատարմագրման գործընթացի մեջ		Գնահատողների և փորձագետների խումբ	գործողությունների ծրագրի ընդունումից 15 ամսվա ընթացքում	Հավատարմագրման ազգային մարմին
2.3.13	Մշակել հավատարմագրման մարմնի բիզնես պլանը և սահմանել հավատարմագրման վճարները	Բիզնես պլանը պետք է կազմել շուկայի հետազոտություն արդյունքների հիման վրա: Հավատարմագրման վճարները պետք է դառնան հավատարմագրման մարմնի ֆինանսավորման հիմնական աղբյուրներից մեկը:	Կախված է 2.3.6-րդ գործողությունից	Բիզնես պլան Սահմանված գնացուցակը	գործողությունների ծրագրի ընդունումից 12 ամսվա ընթացքում	ԷՆ, Հավատարմագրման ազգային մարմին
2.3.14	Հավատարմագրման ազգային մարմնին տրամադրել համակարգիչներ և համացանցային կապ	Հավատարմագրման գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների առկայություն		Մրցույթը հայտարարվել է	գործողությունների ծրագրի ընդունումից 12 ամսվա ընթացքում	ԷՆ, Հավատարմագրման ազգային մարմին
2.3.15	Անդամակցության համար դիմումների ներկայացում ԼՀՄՀ-ին և ՀՄՖ-ին	Հավատարմագրման ազգային մարմնի համագործակցությունը հավատարմագրման միջազգային կազմակերպությունների հետ:		Կառավարության որոշման նախագիծ Անդամակցության դիմում	գործողությունների ծրագրի ընդունումից 9 ամսվա ընթացքում գործողությունների ծրագրի ընդունումից 11 ամսվա ընթացքում	ԷՆ, Հավատարմագրման ազգային մարմին

1	2	3	4	5	6	7
2.3.16	ՏԱՏՓԳ ծրագրի շրջանակներում աշխատաժողովի համար հայտերի նախապատրաստում	Դասընթաց ԻՍՕ/ԻԷԿ 17011 և ԻՍՕ/ԻԷԿ 17025 միջազգային ստանդարտների գործնական կիրառության վերաբերյալ		Ուսուցման միջոցառումներ	գործողությունների ծրագրի ընդունումից 4 ամսվա ընթացքում	ԷՆ, Հավատարմագրման գործակալություն
2.3.17	ՏԱՏՓԳ ծրագրի շրջանակներում ուսուցողական այցի համար հայտի նախապատրաստում	ԵՄ հավատարմագրման գործընթացի գործնական փորձի ձեռքբերում։ Այցելություն միջազգային ճանաչում ունեցող հավատարմագրման ազգային մարմին. Մասնակցություն գնահատման գործընթացին		Ուսուցողական այց	գործողությունների ծրագրի ընդունումից 6 ամսվա ընթացքում	ԷՆ, Հավատարմագրման գործակալություն
2.3.18	Հայերեն թարգմանել հավատարմագրման ոլորտի միջազգային փաստաթղթերը և ուղեցուցները	Հավատարմագրման ոլորտի միջազգային փաստաթղթերն առկայությունը ՀՀ պետական լեզվով, որը մեծ հնարավորություն է տալիս դրանց կիրառման համար		Թարգմանված ուղեցուցներ	2010-2011	ԷՆ, Հավատարմագրման ազգային մարմին
2.4	Չափագիտություն					
2.4.1	Մշակել ստուգաճշտման և չափումների կարողությունների հայեցակարգի նախագիծ, բարեփոխված չափագիտության ազգային ինստիտուտի համար։	Հայեցակարգում պետք է թվարկել լաբորատորիաները՝ ըստ չափումների բնագավառների, անհրաժեշտ էտալոնները և նախատեսված անհրաժեշտ ստուգաճշտման և չափումների կարողությունները չափագիտության բարեփոխված ինստիտուտի համար։ Նրանում պետք է ներկայացնել նաև չափագիտության նոր շենքում անհրաժեշտ լաբորատորիայի մակերեսի և շինարարական ծախսերի նախահաշվարկը։		Հայեցակարգի նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 6 ամսվա ընթացքում	Չափագիտության ազգային ինստիտուտ
2.4.2	Քննարկել և ներկայացնել կառավարության հաստատմանը բարեփոխված			Կառավարության որոշման նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից	ԷՆ, Չափագիտության ազգային

1	2	3	4	5	6	7
	չափագիտության ազգային ինստիտուտի համար ստուգաճշտման և չափումների կարողությունների հայեցակարգի նախագիծը:				9 ամսվա ընթացքում	ինստիտուտ
2.4.3	Ընտրել և տրամադրել համապատասխան տարածք՝ չափագիտության ինստիտուտի նոր շենքը հիմնելու (կառուցելու) համար	Չափագիտության Ինստիտուտի նոր շենքի տարածքը պետք է լինի ապագա Ազգային գիտական լաբորատորիայի տարածքում	Կախված է 2.4.1-րդ գործողությունից	Կառավարության որոշման նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 9 ամսվա ընթացքում	ԷՆ, Չափագիտության ազգային ինստիտուտ
2.4.4	Մշակել չափագիտության նոր շենքի նախագիծը	Համաձայն հայեցակարգին՝ կառավարության կողմից հաստատվելուց հետո	Կախված է 2.4.1-րդ և 2.4.3-րդ գործողություն-ներից	Մրցույթը հայտարարվել է	գործողությունների ծրագրի ընդունումից 24 ամսվա ընթացքում	ԷՆ, Չափագիտության ազգային ինստիտուտ
2.4.5	Մշակել բարեփոխված Չափագիտության ազգային ինստիտուտի կազմակերպական կառույցվածքը և հաստիքի նկարագրությունները:	Որոշել և բաշխել չափագիտության գործի մասնակիցների իրավունքները, պարտականությունները և գործառույթները		Մշակել կազմակերպական կառույցվածքը Հաստիքի նկարագրությունների նախագիծ	գործողությունների ծրագրի ընդունումից 5 ամսվա ընթացքում գործողությունների ծրագրի ընդունումից 6 ամսվա ընթացքում	ԷՆ, Չափագիտության ազգային ինստիտուտ
2.4.6	Փոփոխել չափագիտության ազգային ինստիտուտի կառուցվածքը	Հետևել օրենսդրությամբ սահմանված ընթացակարգին			գործողությունների ծրագրի ընդունումից 15 ամսվա ընթացքում	ԷՆ, Չափագիտության ազգային ինստիտուտ
2.4.7	Նշանակել Չափագիտության բարեփոխված ազգային	Մրցույթի հիման վրա	Կախված է 2.4.6-րդ	Մրցույթը հայտարարվել	գործողությունների ծրագրի	ԷՆ, Չափագիտության

1	2	3	4	5	6	7
	ինստիտուտի տնօրեն		գործողությունից	է	ընդունումից 17 ամսվա ընթացքում	յան ազգային ինստիտուտ
2.4.8	Ստեղծել Չափագիտության ազգային խորհուրդ	Մարմնի աշխատանքները և կազմը պետք է համապատասխանի չափագիտության մասին նոր օրենքին	Կախված է 2.4.6-րդ գործողությունից	Խորհուրդը ստեղծվել է	գործողությունների ծրագրի ընդունումից 17 ամսվա ընթացքում	Չափագիտության ազգային ինստիտուտ
2.4.9	ԿՈՈՄԵՏ-ում անդամակցության վերահաստատում	Բարեփոխված Չափագիտության ազգային ինստիտուտի ինտեգրում	Կախված է 2.4.6-րդ գործողությունից		գործողությունների ծրագրի ընդունումից 17 ամսվա ընթացքում	ԷՆ, Չափագիտության ազգային ինստիտուտ
2.4.10	Դիմումի ներկայացում ՕՉՄԿ-ին և Չափումներ կոնվենցիային անդամակցելու նպատակով	Չափագիտության ազգային ինստիտուտի համագործակցությունը չափագիտության միջազգային կազմակերպությունների հետ		Կառավարության որոշման նախագիծ Անդամակցության դիմում	գործողությունների ծրագրի ընդունումից 18 ամսվա ընթացքում գործողությունների ծրագրի ընդունումից 20 ամսվա ընթացքում	ԷՆ, Չափագիտության ազգային ինստիտուտ
Ազգային						
2.4.11	Ուսուցման միջոցառումների շարքի անցկացում ընդհանուր չափագիտության թեմաներով	Նման թեմաներն են չափումների հետագծելիությունը, չափումների անճշտությունների գնահատումը, չափման մեթոդների հաստատումը		Ուսուցման միջոցառումներ	2011թ.	Չափագիտության ազգային ինստիտուտ
2.4.12	Ուսուցողական այցեր արտասահմանյան չափագիտության	Կախված է 2.4.1-2.4.3 գործողությունների իրականացմանն առնչվող կարիքներից		Ուսուցողական այցեր	2010-2011թ.թ.	ԷՆ, Չափագիտության ազգային

1	2	3	4	5	6	7
	ինստիտուտներ					ինստիտուտ
2.5	Փորձարկում, տեխնիկական հսկողություն և սերտիֆիկացում					
2.5.1	Ստեղծել առանձին փակ բաժնետիրական ընկերություն Ստանդարտների ազգային ինստիտուտի սերտիֆիկացման գործունեությունը իրականացնելու նպատակով	Սերտիֆիկացման գործունեությունը ստանդարտացումից առանձնացնելու միջոցով վերացնել Ստանդարտների ազգային ինստիտուտի ներսում առկա շահերի բախումը: Հետևել Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի ընթացակարգին:		Նոր մարմնի գրանցումը	գործողությունների ծրագրի ընդունումից 4 ամսվա ընթացքում	ԷՆ, Ստանդարտների ազգային ինստիտուտ
2.5.2	Սկսել մրցույթ նոր սերտիֆիկացման մարմնի կոնցեսիայի համար (նոր փակ բաժնետիրական ընկերություն)	Էկոնոմիկայի նախարարության համակարգում շահերի բախումից խուսափելու համար		Մրցույթը հրապարակվել է	գործողությունների ծրագրի ընդունումից 8 ամսվա ընթացքում	ԷՆ
2.5.3	Իրականացնել իրազեկման հանդիպումներ համապատասխանության գնահատման մարմինների համար	Նշել համաձայն միջազգային ստանդարտների հավատարմագրման անցումային շրջանի սկիզբը		Իրազեկման հանդիպում	2010թ. հունիս	Հավատարմագրման ազգային մարմին
2.5.4	Որոշարկել ԽՀԱԱՀ-ի գերակա ոլորտներում գործող համապատասխանության գնահատման մարմինները	Պետք է ստեղծել համապատասխանության գնահատման մարմինների ցանկը		Հաշվետվություն	գործողությունների ծրագրի ընդունումից 9 ամսվա ընթացքում	ԷՆ, Հավատարմագրման ազգային մարմին
2.5.5	Իրականացնել իրազեկման հանդիպումներ ԽՀԱԱՀ-ի գերակա ոլորտներում գործող համապատասխանության գնահատման մարմինների համար	Բացատրել ԽՀԱԱՀ-ով ստեղծվող հնարավորությունները և տրված սերտիֆիկատների ճանաչմանը ներկայացվող պահանջները		Հաշվետվություն	գործողությունների ծրագրի ընդունումից 11 ամսվա ընթացքում	ԷՆ, Հավատարմագրման ազգային մարմին
2.5.6	Գնահատել ԽՀԱԱՀ-ի գերակա ոլորտներում գործող	Բացերի գնահատում՝ ներդրումների և կարողությունների հզորացման		Գնահատման հաշվետվություն	գործողությունների ծրագրի	ԷՆ

1	2	3	4	5	6	7
	համապատասխանության գնահատման մարմինների՝ համաձայն միջազգային ստանդարտներին հավատարմագրվելու պատրաստականությունը	կարիքները որոշարկելու համար		ւն	ընդունումից 15 ամսվա ընթացքում	
2.5.7	Նախագծել դրամաշնորհների սխեմա համապատասխա-նության գնահատման մարմինների հավատար-մագրմանը և տնտեսվարող սուբյեկտների սերտիֆիկաց-մանը աջակցելու նպատակով	Դրամաշնորհների սխեման պետք է կազմված լինի մինչև 2012թ. վերջը		Ծրագրի փաստաթղթեր ի նախագիծը	գործողությունն երի ծրագրի ընդունումից 24 ամսվա ընթացքում	ԷՆ, Որակի խորհուրդ
2.6	Շուկայի վերահսկողություն (ի լրումն Պետական տեսչական բարեփոխման գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների)					
2.6.1	Վերանայել ՇՍՇՊ ՊՏ –ի կանոնադրությունը	Վերհանել նոր օրենսդրությամբ նախատեսված գործառույթներից բխող թույլ կողմերը և բացերը՝ համագործակցելով Պետական տեսչական բարեփոխման թմի հետ		Հաշվետվություն	գործողությունն երի ծրագրի ընդունումից 5 ամսվա ընթացքում	ԷՆ, ՇՍՇՊ ՊՏ
2.6.2	ՇՍՇՊ ՊՏ -ի էթիկայի կանոնների վերանայում	Միջազգային լավագույն փորձի ընդունում		Էթիկայի կանոնների վերանայված տարբերակ	գործողությունն երի ծրագրի ընդունումից 8 ամսվա ընթացքում	ՇՍՇՊ ՊՏ
2.6.3	Ուսուցում շուկայի վերահսկողության էթիկայի խնդիրների թեմայով	Ուսուցում վերանայված էթիկայի կանոնների իրականացումն ամրապնդելու նպատակով		Ուսուցման միջոցառում	գործողությունն երի ծրագրի ընդունումից 10 ամսվա ընթացքում	ՇՍՇՊ ՊՏ
2.6.4	ՇՍՇՊ ՊՏ -ի կազմակերպական կառուցվածքի օպտիմալացում և կանոնադրության բարելավում	Կազմակերպական կառուցվածքը պետք է հարմարեցնել՝ տեսչության նոր գործառույթներին համապատասխան		Նոր կազմակերպա կան	գործողությունն երի ծրագրի ընդունումից	ՇՍՇՊ ՊՏ

1	2	3	4	5	6	7
				կառուցվածք Վերանայված կանոնադրության նախագիծ Կառավարության որոշման նախագիծ	10 ամսվա ընթացքում	
2.6.5	Մշակել հայտեր ԵՄ ՏԱՏՓԳ-ի շրջանակում աշխատաժողովների համար	Ուսուցում ԵՄ շուկայի վերահսկողության պահանջների և գործելակերպի թեմայով		Ուսուցման միջոցառումներ	2010թ. դեկտեմբեր	ԷՆ, ՇՄՇՊ ՊՏ
2.6.6	ՇՄՇՊ ՊՏ -ի շուկայի վերահսկողության ներքին ընթացակարգերի վերանայում և բարելավում	Ընդունված նոր օրենսդրությանը համապատասխան		Փաստաթղթերով հիմնավորված վերանայված ներքին ընթացակարգեր	գործողությունների ծրագրի ընդունումից 18 ամսվա ընթացքում	ՇՄՇՊ ՊՏ
2.6.7	Կազմել համագործակցության ընթացակարգեր մաքսային մարմնի և ՇՄՇՊ ՊՏ -ի միջև	Համագործակցությունը պետք է կառուցել եվրոպական մոդելի հիման վրա (թիվ 765/2008 կանոնակարգ)։ Այն պետք է առնվազն ներառի պարտադիր սերտիֆիկացման ենթակա արտադրանքի մասին տեղեկատվության փոխանակումը։		Համագործակցության ընթացակարգեր	գործողությունների ծրագրի ընդունումից 20 ամսվա ընթացքում	ՇՄՇՊ ՊՏ
3.	ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ					
3.1.	Հանրային իրազեկման քարոզարշավ՝ մշակված հորիզոնական օրենսդրությունը ներկայացնելու նպատակով	Հասցեագրված է շահագրգիռ կողմերին		Իրազեկման միջոցառումներ	2010թ. հոկտեմբեր-դեկտեմբեր	ԷՆ
3.2.	Հանրային իրազեկման	Հասցեագրված է շահագրգիռ կողմերին		Իրազեկման	2011թ.	ԷՆ

1	2	3	4	5	6	7
	քարոզարշավ՝ բարեփոխված հաստատությունները ներկայացնելու նպատակով			միջոցառումնե ր		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ